

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ 2022

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ....2
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ....2
ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ....4
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ....4
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ....7
ԴԵՖԻՑԻՏ....10
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ....12
ԾԱԽՍԵՐ....17
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ....21
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ....22
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ....33
ՄԻԳՐԱՑԻԱ....35
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ....37
ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ....42
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԴԻՈ....46
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ....48
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ....52
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ....56
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ....63
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ....76
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ....83
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ....87
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....97
ՍՓՅՈՒՌՔ....101
ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ....104
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ....107
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....109

ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

- Պետական բյուջեն կառավարության տարբեր քաղաքականություններն ամփոփող կարևոր ծրագրային փաստաթուղթ է, որն արտահայտում է, թե կառավարությունը հանրային ռեսուրսները ինչպե՞ս է նախատեսում օգտագործել, ո՞ր քաղաքական նպատակների համար, ինչպիսի՞ հանրային ծառայություններ և ի՞նչ ծավալով են մատուցվելու, և ի վերջո, ինչպիսի՞ արդյունքներ են ապահովվելու հանրության համար:
- Պետական բյուջեն նախ և առաջ արտահայտում է հարկաբյուջետային քաղաքականությունը, որը կարող է համարվել արդյունավետ, եթե ապահովվում է հանրային միջոցների այնպիսի բաշխման և վերաբաշխման համակարգ, որը մի կողմից կերաշխավորի տնտեսության զարգացումը, մյուս կողմից՝ սոցիալական և անվտանգային կարիքների արդյունավետ հասցեագրումը:
- Հայտնի է, որ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղակիորեն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, իսկ մյուս կողմից՝ տնտեսական զարգացումներն, իրենց հերթին, մեծ ազդեցություն ունեն կառավարության ֆինանսների վրա: Տնտեսական աճն ապահովում է տնտեսությունում ավելի մեծ եկամուտներ՝ հետևաբար հարկային եկամուտների աճ: Մինչդեռ, տնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է հանգեցնել հարկերի կրճատման, միաժամանակ՝ կառավարության սոցիալական ծախսերի պահանջի ընդլայնման և ֆինանսական բեռի ծանրացման:
- ՀՀ ընթացիկ տնտեսական զարգացումների, համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունների մեղմմանն ու տնտեսության վերականգնմանն ուղղված կառավարության կողմից իրականացված և իրականացվող հարկաբյուջետային միջոցառումների պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է ապահովել հարկաբյուջետային կայունությունը՝ միաժամանակ աջակցելով տնտեսական վերականգնմանը և պայմաններ ստեղծելով ՀՀ կառավարության պարտքի նվազման համար:
- Սպասվող արտաքին տնտեսական բարենպաստ միջավայրի և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսված տնտեսության և տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված քաղաքականությունների և դրանցից բխող միջոցառումների պայմաններում, 2022թ. կանխատեսվում է 7.0% տնտեսական աճ, ինչը համահունչ է նպատակադրած տնտեսական աճի թիրախին:
- 2022թ. հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի ՀՀ կառավարության թիրախավորված 7.0% տնտեսական աճի խթանմանը՝ շեշտադրվելով պետական ներդրումների մասնաբաժնի էական մեծացումը և ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև՝ պարտքի կայունություն պահպանմանը: 2022թ.-ին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա կլինի չեզոք:
- 2022թ.-ին ՀՀ Կառավարությունը թիրախավորում է պարտքի կայունության պահպանման պայմաններում նպաստել բարձր տնտեսական աճի ապահովմանը, միաժամանակ վերադարձ կատարելով ՀՀ օրենսդրությամբ բնականոն իրավիճակների համար սահմանված ծախսային

կանոնների, այդ թվում՝ պետական ֆինանսների «ոսկե կանոնների» և ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպի՝ երկարաժամկետ տնտեսական աճի միջին տեմպով սահմանափակման կանոնի ամբողջական պահպանմանը

- Պետական բյուջեի ծախսերը 2022թ-ին՝ 2021-ի սպասվող ցուցանիշի համեմատ կաճեն 10. տոկոսով: Ընդհանուր ծախսերի մոտ 15.7 տոկոսը կուղղվի կապիտալ ներդրումներին: Պետական բյուջեի ընդհանուր դեֆիցիտը (պակասուրդը), որն ըստ էության արտահայտում է կառավարության կողմից տնտեսություն ներմղված (պետական բյուջեի ծախսեր) և տնտեսությունից արտաքաշված (պետական բյուջեի եկամուտներ) միջոցների տարբերությունը, կկազմի ծրագրային ՀՆԱ-ի 3.0 տոկոսը:
- Բարձր տնտեսական աճի պայմաններում, հարկային վարչարարության լրացուցիչ ջանքի և օրենսդրական բարեփոխումների արդյունքում, ակնկալվում է, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ.-ին կբարելավվի շուրջ 0.9 տոկոսային կետով:
- Կարճաժամկետ հատվածում ՀՀ կենտրոնական բանկը կշարունակի իրականացնել գնաճային սպասումների արագացման ռիսկերի չեզոքացմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն՝ միևնույն ժամանակ ապահովելով հնարավորին նպաստավոր պայմաններ ամբողջական պահանջարկի վերականգնման համար, իսկ 2022թ. գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու նպատակով՝ ցանկացած ռիսկերի դրսևորման պարագայում պատրաստ է համապատասխանորեն արձագանքել:
- Ներքին պահանջարկի արագ վերականգնումը կարտացոլվի ներմուծման արագացմամբ, սակայն արտահանման առաջանցիկ աճն ու դրամական փոխանցումների բարձր մակարդակները կնպաստեն ընթացիկ հաշվի բարելավմանը 2021թ.-ին, իսկ 2022թ. ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի խորացմամբ պայմանավորված՝ ընթացիկ հաշիվը փոքր-ինչ կխորանա:
- Հարկաբյուջետային ազդակը -1.9 տոկոսից (2021թ. սպասում) 2022թ.-ին կդառնա չեզոք (0.0%):

Աղյուսակ 1. 2022թ. պետական բյուջեի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (% արտահայտությամբ)

Չափորոշիչ	2018	2019	2020	2021	2022
	փաստ.	փաստ.	փաստ.	Սպասում	Ծրագիր
Տնտեսական աճ	5.2	7.6	-7.4	6.5	7.0
Հիմնական միջոցներում ներդրումներ[1]/ՀՆԱ	16.7	15.8	16.6	16.4	18.7
Սպառում/ՀՆԱ	91.3	96.0	91.4	92.5	91.3
ՀՆԱ դեֆլյատոր	2.8	1.0	2.0	6.8	4.6
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	1.8	0.7	3.7	7.4	5.2
Գնաճ (միջին), %	2.5	1.4	1.2	7.0	5.6
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ	-1.8	-1.0	-5.4	-4.7	-3.0
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-7.0	-7.4	-3.8	-1.7	-3.0

[1] *Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:*

ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաշվի առնելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկայացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 2,184.0 մլրդ դրամի չափով:Հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Արցախյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում.
- ՀՀ կառավարության 2022 թվականի ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններից:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

- Պետական բյուջեն պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիրն է: Այն ներառում է պետական եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը: Որպես քաղաքականության կարևոր փաստաթուղթ, բյուջեն ցույց է տալիս տնտեսության վրա պետության ազդեցության բնույթը և չափը: Այն ցույց է տալիս, թե կառավարությունը, օգտագործելով հասարակական ռեսուրսները, ինչպես է ծրագրում իրագործել քաղաքական նպատակները և ինչպիսի հասարակական ծառայություններ է մատուցում:

Գծապատկեր 1. Պետական բյուջեն և տնտեսությունը



- 2022 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 1,947.8 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 2,184.0 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 236.3 մլրդ դրամ:

Գծապատկեր 2. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը 2021 և 2022 թվականներին, մլրդ. դրամ



Գծապատկեր 3. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը, մլրդ., դրամ, ՀՆԱ-ի նկատմաբ տոկոս, 2018-2022թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

- 2022թ. պետական բյուջեի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել 1,947.8 մլրդ դրամի չափով, 2021 թվականի համար սպասվող 1,656.9 մլրդ դրամի և 2020 թվականին փաստացի ստացված 1,560.7 մլրդ. դրամ գումարների դիմաց: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Գծապատկեր 4. ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2019-2022թթ. մլրդ.դրամ



- Հարկային եկամուտները և տուրքերը ՀՀ պետական բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրն են և 2022թ. կկազմեն ընդամենը բյուջեի եկամուտների 94.7 տոկոսը:
- Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները համապատասխանաբար կապահովեն տարեկան բյուջետային եկամուտների 2.1 տոկոսը և 3.2 տոկոսը:

Գծապատկեր 5. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2021-2022թթ. տոկոս





Գծապատկեր 6. ՀՀ պաշտոնական դրամաշնորհների կառուցվածքն ըստ դոնորների, 2022թ.մլրդ դրամ

Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ 41.8 մլրդ ՀՀ դրամ

ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր) 5.0 մլրդ.

ԵՄ (2.6 մլրդ եվրո) 13.0 մլրդ

Այլ նպատակային դրամաշնորհներ 23.8 մլրդ.

Գծապատկեր 7. ՀՀ պաշտոնական դրամաշնորհների կառուցվածքն ըստ դոնորների, 2022թ. մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը)



Գծապատկեր 8. 2022թ. ՀՀ պաշտոնական դրամաշնորհների կառուցվածքն ըստ ոլորտների, մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը)



ԴԵՖԻՑԻՏ

- Պետական բյուջեի դեֆիցիտը բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումն է: Դա տեղի է ունենում, երբ ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելին, քան բյուջեի եկամուտներն են: Այսինքն, ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավվելով լրացուցիչ միջոցներ ֆինանսավորում են բյուջեի եկամուտները գերազանցող ծախսերը:
- ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 3.0 %-ի չափով և կազմում է 236.3 մլրդ դրամ:

Գծապատկեր 9. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը 2019-2022թթ.



- Դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվում է ներքին և արտաքին աղբյուրներից զուտ մուտքերի, այսինքն՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերության հաշվին:

Գծապատկեր 10. Դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը 2022թ. մլրդ. դրամ



Գծապատկեր 11. Դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքն ըստ արտաքին և ներքին աղբյուրների 2022թ. մլրդ. դրամ





- Երբ հավաքագրված բյուջետային եկամուտները կառավարությանը հնարավորություն չեն տալիս իրականացնել պլանավորված ծրագրերը, կառավարությունը որոշում է պարտավորություններ վերցնել ներքին կամ արտաքին աղբյուրներից՝ ներգրավվելով լրացուցիչ միջոցներ, որը հանգեցնում է ներքին կամ արտաքին պարտքի աճին:
- 2022 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին և ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026 թվականների ծրագրին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները:
- ՀՀ 2021թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն 2022 թվականին համախառն ֆինանսական կարիքը կկազմի 650.2 մլրդ դրամ:

Գծապատկեր 12. ՀՀ համախառն ֆինանսական կարիքը 2022թ.



- 2022թ. նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 64.6 տոկոսն ապահովել ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին, իսկ 35.4 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին:

- ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 236.3 մլրդ դրամ և նախատեսվում է այն ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորել 272.2 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ (36.0) մլրդ դրամով

Գծապատկեր 13. ՀՀ պարտքային պարտավորությունների կառուցվածքը ՀՆԱ նկատմամբ, 2018-2022թթ. (%)



- ՀՀ 2022թ. պետական բյուջեի նախագծի հիմքում դրված պակասուրդի ֆինանսավորման սցենարը, որի համաձայն զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 356.5 մլրդ դրամի չափով, որից 250.2 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին, 106.3 մլրդ դրամը՝ արտաքին վարկերի հաշվին (հաշվի առնելով կատարվելիք մասհանումների և մայր գումարի մարումների տարբերությունը)[2], և արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին մուտքեր չեն նախատեսվել.

Գծապատկեր 14. Ներքին պետական պարտք/արտաքին պետական պարտք



[2] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

- 2022 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 35.8%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ):

Գծապատկեր 15. 2022թ. արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների



- ՀՀ կառավարության ամենախոշոր վարկատուն Համաշխարհային բանկն (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ) է: 2022թ. վերջինիս բաժին կընկնի արտաքին վարկերի գծով պարտքի 35.8%-ը:
- ՀՀ 2021 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 152.2 մլրդ դրամի (308.2 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ3: Ընդ որում մասհանումներից 102.8 մլրդ դրամը (208.2 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 49.4 մլրդ դրամը (100.0 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:
- 2022 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.

[3] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

Գծապատկեր 16. Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը 31.12.2022թ. դրությամբ (մլրդ դրամ)



- 2022 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի –5.0%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.7%-ը:

Գծապատկեր 17. 2022թ. ստացվող վարկերի կառուցվածքը ըստ ոլորտների, մլրդ դրամ



- ՀՀ 2022 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 227.8 մլրդ դրամի (477 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ: Ընդ որում մասհանումներից 132.3 մլրդ դրամը (277 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 95.5 մլրդ դրամը (200 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:
- 2022 թվականի համար ծրագրավորված մասհանումների 46.9%-ի աղբյուրները ենթակա են հստակեցման, 12.0%-ը՝ Ասիական Զարգացման Բանկի վարկերի գծով, 11.4%-ը՝

Համաշխարհային Բանկի (ՎԶՄԲ և ԶՄԸ) վարկերի գծով և 10.3%-ը՝ գերմանական վարկերի գծով:

Գծապատկեր 18. 2022 թվականին կառավարության արտաքին վարկերի գծով նախատեսվող վճարումների կառուցվածքը ըստ վարկատուների, %



Գծապատկեր 19. Մասհանումների կառուցվածքն ըստ ոլորտների (մլն. ԱՄՆ դոլար)



- Հաշվի առնելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները՝ ՀՀ կառավարությունը ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 2,184.0 մլրդ դրամի չափով:
- 2022 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 23.4 %: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 4.3%:

Գծապատկեր 20. 2018-2022թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները



- 2022 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 84.3 %-ը կկազմեն ընթացիկ ծախսերը, (2021 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 88.3%), որոնք ուղղված կլի-նի ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին:

Գծապատկեր 21. 2018-2022թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ



- 2022թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել դրամաշնորհներ 2021 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ համապատասխանաբար 65.8 մլրդ դրամով կամ 40.4 տոկոսով ավել, որը պայմանավորված էր դրոշմանիշային վճարների 2022թ. բյուջեում եկամուտների և ծախսերի նախատեսմամբ, ինչպես նաև ԵՄ աջակցությամբ ծրագրերով նախատեսմամբ:
- 2022թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել ծառայությունների, ապրանքների ձեռքբերման և այլ ծախսերի գծով 2021 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 55.4 մլրդ դրամով կամ 12.4 տոկոսով ավել:
- 2022 թվականի պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել հատկացումներ ՀՀ համայնքներին, որը կազմել է շուրջ 91.2 մլրդ դրամ (2021 թվականին այն կազմել է՝ շուրջ 82.5 մլրդ դրամ) կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 4.2 % և ՀՆԱ-ի 1.2 %):
- 2022 թվականի ընթացքում ոչ ֆինանսական ակտիվ¬ների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է արտաքին և ներքին աղբյուրների ծավալի ավելացում: Ընդ որում ներքին աղբյուրների ծավալի ավելացումը կրում է առաջանցիկ բնույթ:

Գծապատկեր 22. 2018-2022թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը



- 2022 թվականի ընթացքում ընդհանուր ծավալի կանխատեսվող 351.9 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շուրջ 37%-ը (130.3 մլրդ դրամ)՝ նախատեսվում է ֆինանսավորել արտաքին աղբյուրների, իսկ 63%-ը (221.9 մլրդ դրամ) ներքին աղբյուրների հաշվին:

Գծապատկեր 23. 2022թ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ արտաքին և ներքին աղբյուրների, ընդհանուրի նկատմամբ %



Գծապատկեր 24. 2018-2022թթ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը



Գծապատկեր 25. 2022 թվականի սոցիալական և տնտեսական ոլորտների ուղղվող ծախսերը ընդամենը ծախսերի մեջ (փակագծերում՝ կշիռը ՀՆԱ-ում)



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2022թ. աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի համար գերակա վերջնական արդյունքներ են պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարձրացումը՝ միաժամանակ ապահովելով աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտային առանձին խնդիրներին համակարգային և համալիր լուծումների մշակմամբ և ինստիտուտների զարգացմամբ:

- Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների բնագավառում կշարունակվի ընտանիքների անապահովության (սոցիալական) գնահատման համակարգի հասցեականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, վերսկսվելու են նոր համակարգ ներդնելու աշխատանքները, ինչը սոցիալական աջակցության ծրագրերը կդարձնի ավելի հասցեական և նպատակային:

- Կհզորացվեն նորաստեղծ միասնական սոցիալական ծառայության կարողությունները, կբարձրացվեն աշխատողների պրոֆեսիոնալիզմը:

- Կշարունակվեն սոցիալական դեպքի վարման գործառնական հենքի ձևավորման, ինչպես նաև տեղեկատվական համակարգի կատարելագործման աշխատանքները:

- Կշարունակվեն սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի խնդրի լուծման նպատակով սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հասցեական ծրագրերի իրականացման աշխատանքները:

- Կշարունակվի նաև երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը ուղղված միջոցառումների իրականացումը:

- Ծնելիությունը խթանելու և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2022թ. հունվարի 1-ից հետո ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ նոր ծնված երեխայի ծնողին կնշանակվի և մինչև երեխայի 6 տարեկանը լրանալը կվճարվի դրամական աջակցություն՝ ամսական 50000 դրամի չափով: Միջոցառման շարունակականության հարցը կքննարկվի 2026թ.՝ նախորդ ժամանակահատվածի արդյունավետության գնահատականի հիման վրա:
- Աշխատանքի և զբաղվածության բնագավառում պետական քաղաքականության մեջ գերակա են զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության ու արդյունավետության բարձրացումը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների բարձրացումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ՝ ընտանիքների աղքատությունից դուրս գալը, երեխա ունեցող ծնողների համար՝ աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելուն աջակցող միջոցառումների բարելավումը, արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման նպատակով՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցումը և բարելավումը՝ համապատասխանեցվելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին, աշխատողների իրավունքների պաշտպանության

համակարգի բարելավման նպատակով՝ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր տեսչական մարմնի կարողությունների հզորացումը, պետական հատվածի աշխատողների սոցիալական երաշխիքների ընդլայնումը:

- Երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունը ուղղվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, հաստատություններում նրանց խնամքի, դաստիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, ինչպես նաև թրաֆիքինգի և սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելմանը: Կշարունակվի երեխաների՝ շուրջօրյա խնամքի հաստատություններից դուրսբերումը և ընտանիքների հետ վերամիավորումը:
- Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունը ուղղվում է Հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթի կանխարգելման գործընթացի շարունակականության ապահովմանը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունը շարունակվելու է ուղղվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ հաշմանդամություն ունեցող անձի գնահատված կարիքին համարժեք ծառայությունների մատուցման միջոցով:
- Տարեցների հիմնահարցերի բնագավառում քաղաքականությունը ուղղված է 18 տարեկանից բարձր տարիքի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց մատուցվող խնամքի ծառայությունների տրամադրմանը՝ խրախուսելով մրցութային եղանակով ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին, բարելավվելով շահառուներին մատուցվող ծառայությունների որակը, ընդլայնելով տարեցներին մատուցվող համայնքահեն ծառայությունները՝ ներգրավելով համայնքի ներուժը, և այս ամենն իրականացվելու է զուգորդված իրավական դաշտի կատարելագործման հետ:
- Կենսաթոշակային ապահովության բնագավառում 2022թ. կբարձրացվեն նվազագույն կենսաթոշակի, սոցիալական նպաստների չափերը, իսկ պետական կենսաթոշակների հաշվարկման համար կիրառվող մյուս հիմնական ցուցանիշների դեպքում՝ կպահպանվեն 2021թ. համար սահմանված չափերը:
- 2022թ. համար կենսաթոշակային ոլորտի հիմնական ցուցանիշներն են.

  1) նվազագույն կենսաթոշակի չափը՝ 28600 դրամ (26500 դրամի փոխարեն),

  2) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը՝

  ա. առաջին խմբի հաշմանդամի համար՝ 43000 դրամ (40000 դրամի փոխարեն)

  բ. երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 33000 դրամ (30000 դրամի փոխարեն)

  գ. երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 30000 դրամ (27000 դրամի փոխարեն)

  3) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը՝ 30000 դրամ (27000 դրամի փոխարեն):
- Սոցիալական ապահովության բնագավառում 2022թ. ավելանալու են ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը՝ դրանք սահմանելով 28600 դրամ (26500 դրամի փոխարեն), իսկ հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 37000 դրամ (26500 դրամի փոխարեն):
- Մինչ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ԸԿԲՆ) 2022թ. համակարգի վերանայումը 2022թ. ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ կտրամադրվի շուրջ 89629 ընտանիքի, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի շուրջ 31 350 դրամ: Հաշվի առնելով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու

առաջնահերթության սկզբունքը՝ հաշվարկներում կանխատեսվել է, որ 89629 ընտանիքի մոտ 72%-ը կկազմեն երեխա ունեցող ընտանիքները:

- 2022 թվականին սոցիալական պաշտպանության ծրագրերի պետական ֆինանսավորման ծավալներում կարևորվում են կենսաթոշակային և սոցիալական ապահովությունը, ժողովրդագրական վիճակի բարելավումը և անապահով սոցիալական խմբերին աջակցությունը:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների կշիռը ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացողների թվում մինչև 2022թ. ավարտը կկազմի ոչ պակաս, քան 75.0 %:
- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներն են՝

  1. ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող ընտանիքների համար,

  2. սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող ընտանիքների համար

  3. հրատապ օգնություն՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների համար:
- Ծնելիության գումարային գործակիցը ելակետային 1.55-ից կաճի՝ 2024թ. կազմելով 1.65:

- Նոր ծնված 1-ին երեխաների քանակը 2023թ. նախատեսվում է 15000, իսկ ընտանիքում 3 անչափահաս երեխա ունեցող խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեցողների միջին ամսական թվաքանակը 9000-ից 2025թ.կհասցվի 10130-ի:
- 2022 թվականի վերջում միասնական սոցիալական ծառայության բոլոր 49 կենտրոնների շենքային պայմանները կլինեն բարելավված և կահավորված:
- 2024թ.՝ 2020թ. համեմատ զբաղվածության կարգավորման բոլոր պետական միջոցառումներում ընդգրկված անձանց տեսակարար կշիռը տարվա ընթացքում գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թվաքանակում կկազմի 58 %:
- Ոլորտում բնակարանային ապահովման միջոցառումների շրջանակում նախատեսվում է բնակարանով ապահովվածների տեսակարար կշիռը բնակարանի կարիք ունեցող դիմումատուների նկատմամբ 2022թ. 4.7 %:
- Նախատեսվում է 2026թ. աշխատանքային միջին ամսական կենսաթոշակը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի նկատմամբ (միջին կենսաթոշակ/աղքատության վերին շեմ) հասցնել 100%-ի:
- Նախատեսվում է մինչև 2026թ. իրականացնել ԿԴԻՀ երեխաների 100%-ի կարիքների խորքային գնահատում:
- Պետության կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող կազմակերպությունների միջոցով երեխային և ընտանիքին աջակցող ցերեկային խնամքի կենտրոններ ունեցող համայնքների թիվը մինչև 2024 թվականը կավելացվի 4 անգամ: Նախատեսվում է մինչև 2026 թվականը բոլոր համայնքներում և Երևան քաղաքում պետության կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող կենտրոններում բոլոր մասնագետները լինեն վերապատրաստված:
- Մինչև 2024թ. նախատեսվում է օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձանց 90%-ին աջակցության կենտրոնների ծառայություններ տրամադրել ՀՀ բոլոր մարզերում, թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված բոլոր անձինք կստանան սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ:

- 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ ստացողների թվաքանակում կբարձրանա խնամքի այլընտրանքային ծառայություններ ստացողների ընգրկվածության մակարդակը՝ ելակետային 0.3%-ից 2024թ. կազմելով 0.8%:
- 2022թ. պետական ծառայություններ ստացող հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կաճի 3.8%-ով, կբարելավվի նրանց մատուցվող ծառայությունների հասցեականությունը և արդյունավետությունը:
- Նախատեսվում է մինչև 2022թ. ավարտը «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեցողների շրջանակ ընդլայնել՝ փոխհատուցում կստանան նաև մինչև 31.12.1939 թ. ներառյալ ծնված անձինք (2021թ. օգտվել են 31.12.1938 թ. ներառյալ ծնված անձինք):
- Սոցիալական ապահովության համատեքստում նախատեսվում է 2026թ. ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների միջին մեծությունը հասցնել 37000 դրամի:
- Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների նպատակն է բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը, աջակցել կենսաթոշակային համակարգի արդիականացմանը և զբաղվածության նոր ռազմավարության իրականացմանը, հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները: Նախատեսվում է մինչև 2023թ. շահառուի կողմից միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնից նպաստներ և ծառայություններ ստանալու հետ կապված միջին ծախսը 3026 դրամից կրճատել 2476 դրամի և ունենալ ամբողջությամբ գործող 49 ՄՍԾՏԿ:

ԲԱԺԻՆ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **2022թ. համար կենսաթոշակային ապահովության բնագավառում.**
- Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ-ծախսը՝33,091.0 մլն դրամ (2021թ.՝ 32,610.2 մլն դրամ), շահառուների թիվ՝ 34 583 մարդ (2020թ.՝ 34 440 մարդ),
- Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ-ծախսը՝ 619.4 մլն դրամ (2021 թվականին՝ 593.5 մլն դրամ), շահառուների թիվ՝ 1 575 մարդ (2021 թվականին՝ 1 655 մարդ),
- Աշխատանքային կենսաթոշակներ-ծախսը՝ 240,610.0 մլն դրամ (2021թ.՝ 245,315.9 մլն դրամ), շահառուների թիվ՝ 460 808 մարդ (2021թ.՝ 467 151 մարդ),
- ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ-պահպանվել է 2021 թվականի ծախսը՝ 3,009.9 մլն դրամ՝ 730 շահառուի համար,
- Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին-ծախսը՝ 106,200.0 մլն դրամ(2021թ.՝ 70,007.6 մլն դրամ)՝ 377 282 շահառուի համար(2021թ.՝ 349 064 շահառու):

- **2022թ. համար սոցիալական ապահովության բնագավառում.**
- Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ-ծախսը՝ 29,535.0 մլն դրամ (2021թ.՝ 25,395.4 մլն դրամ), շահառուների թիվ՝ միջին տարեկան 83 299 շահառու (2021թ.՝ 79 461 մարդ):

- Կենսաթոշակ, ծերության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունեցող անձանց մահվան դեպքում տրվող թաղման նպաստ-ծախսը՝ 5,224.4 մլն դրամ (2021թ.՝ 4,456.8 մլն դրամ), շահառուների կանխատեսվող թիվ՝ 26 122 մարդ (2021թ.՝ 22 284 մարդ):
- **2022թ. համար ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում.**
- Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրում՝ ծախսը՝ 9,362.5 մլն դրամ (2021թ.՝ 7,861.3 մլն դրամ), շահառուների թիվ՝ 28 030 շահառու (2021թ.՝ 24 721 մարդ):

  Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը սահմանվել է 28 600 դրամ (26 500 դրամի փոխարեն):
- Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ծախսը՝ 17,940.0 մլն դրամ (2021թ.՝
- 16,852.2 1 մլն դրամ): 2022թ. պահպանվելու են 2021թ. համար սահմանված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը՝ 1-ին կամ 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 300 հազար դրամ, 3-րդ կամ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում 1.5 մլն դրամ:

- Բազմազավակ ընտանիքներին աջակցելու նպատակով իրականացվող միջոցառման շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում նշված ընտանիքներին՝ իրենց հիպոթեքային վարկերի մարման համար: Այս նպատակով նախատեսվում է հատկացնել նախորդ տարվանից 2.3 անգամ ավելի գումար՝ 1,200.0 մլն դրամ, որից կօգտվի 7 450 բազմազավակ ընտանիք և 1 214 երիտասարդ և երեխաներ ունեցող անձ:

- Կիրականացվի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված նոր միջոցառում: Ծնելիությունը խթանելու և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2022թ. հունվարի 1-ից հետո ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ նոր ծնված երեխայի ծնողին կնշանակվի և մինչև երեխայի 6 տարեկանը լրանալը կվճարվի դրամական աջակցություն՝ ամսական 50000 դրամի չափով: Միջոցառման իրականացմանը կուղղվի 2,925.0 մլն դրամ, ինչի հաշվին հնարավոր կլինի պետական աջակցություն տրամադրել միջին ամսական շուրջ 4 875 նոր ծնված երեխաների ընտանիքներին: Միջոցառման շարունակականության հարցը կքննարկվի 2026թ.՝ նախորդ ժամանակահատվածի արդյունավետության գնահատականի հիման վրա:
- **2022թ. համար սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում**
- Մայրության նպաստ-ծախսը՝ 13,200.0 մլն դրամ (2021թ.՝ 11,260.3 մլն դրամ):
- Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ-ծախսը՝ 5,519.1 մլն. դրամ (2021թ.՝ 3,009.2 մլն դրամ):

- **2022 թ. համար անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառո**
- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներին (ԸԿԲՈՒ) կու[illegible] 2 մլն դրամ (2021թ.՝ 36,680.1 մլն դրամ, 97200 ընտանիք):

  Նպաստառուների թվաքանակը կանխատեսվում է, որ կկազմի 89629 ընտանիք, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի շուրջ 31350 դրամ:

- **2022 թ. համար զբաղվածության բնագավառում.**
- նախատեսվում է հատկացնել 1,564,345.6 հազ. դրամ (ինչը նվազել է 2021թ. փաստացի կատարված ծախսի համեմատ շուրջ 19.4%-ով)՝ ծրագրում կընդգրկվեն 3 520 շահառու, ընդ որում, 3.2%-ը կամ 112-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Կանխատեսվում է, որ զբավածության կարգավորման

2022թ. պետական ծրագրի բոլոր միջոցառումների կայուն զբաղվածության միջինացված գործակիցը կազմելու է 71.6%, ինչը նշանակում է, որ 1 664 մարդու համար կապահովվի կայուն զբաղվածություն: Միաժամանակ, «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» և «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» միջոցառումների արդյունքում ժամանակավոր զբաղվածություն ձեռք կբերի թվով 1 196 մարդ:

Մասնավորապես.

- Աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության մինչև 3 հա հողօգտագործողների սեզոնային զբաղվածության ապահովման նպատակով կիրականացվի թվով 716 միջոցառում: Մեկ միջոցառման միջին արժեքը կկազմի 252.3 հազ. դրամ:
- Կիրականացվի վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման 60 միջոցառում՝ ընդգրկելով 480 գործազուրկ, յուրաքանչյուր միջոցառման համար՝ կհատկացվի առավելագույնը 1,392.6 հազ. դրամ:

- Աշխատաշուկայում անմրցունակ 449 անձի անասնապահությամբ զբաղվելու համար նախատեսվում է տրամադրել 516,960.9 հազ. դրամ, մեկ շահառուի համար՝ մինչև 1,151.4 հազ. դրամ:
- Աշխատաշուկայում անմրցունակ 33 անձի փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար կտրամադրվի 33,823.8 հազ. դրամ, յուրաքանչյուր անձի՝ մինչև 1,025.0 հազ. դրամ, ընդ որում, շահառուների համար կկազմակերպվի նաև դասընթաց՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև մեկ տարի շարունակ կտրամադրվի խորհրդատվական ծառայություն:
- Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող 526 անձինք երեխայի մինչև երկու տարին լրանալը հնարավորություն կունենան վերադառնալ աշխատանքի՝ օգտվելով երեխային խնամող կազմակերպությանը կամ դայակին՝ ծառայություն դիմաց տրվող պետական աջակցությունից: Այս նպատակին նախատեսվում է ուղղել 393,328.0 հազ. դրամ, մեկ շահառուի համար՝ շուրջ 747.8 հազ. դրամ:
- Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող 367 գործազուրկների համար գործատուների մոտ կկազմակերպվի աշխատանքային փորձառություն: Այս նպատակի համար կհատկացվի 148,056.9 հազ. դրամ:

- Աշխատաշուկայում անմրցունակ 489 անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին միանվագ կտրամադրվի 97,800.0 հազ. դրամ, յուրաքանչյուր անձի համար՝ առավելագույնը 200.0 հազ. դրամի չափով:

10 անձի համար կիրականացվի աշխատատեղի հարմարեցման միջոցառում՝ հատկացնելով 4,607.7 հազ. դրամ, յուրաքանչյուր անձի համար՝ առավելագույնը 460.8 հազ. դրամի չափով:

- Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող թվով 434 անձի մասնագիտական ուսուցման կազմակերպմանը կուղղվի շուրջ 40,276.3 հազ. դրամ: Միջոցառման շրջանակներում շահառուին տրամադրվող կրթաթոշակի համար կհատկացվի 44,285.1 հազ. դրամ, որի շրջանակներում՝ յուրաքանչյուր սովորողի դասընթացի տևողության ընթացքում, ամեն ամիս, կտրվի կրթաթոշակ՝ 34,0 հազ. դրամի չափով:
- Աշխատաշուկայում անմրցունակ, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում՝ 16 գործատուի աշխատավարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու համար կհատկացվի 14,039.9 հազ. դրամ: Մեկ միջոցառման արժեքը կկազմի 801.0 հազ. դրամ: Բացի այդ, տեղաշարժման դժվարություններ ունեցող 3 անձի, յուրաքանչյուր ամիս, միջոցառման տևողության ընթացքում կտրամադրվի նաև 34.0 հազ. դրամի չափով գումար՝ ուղեկցող ունենալու համար:

- **2022թ. համար սոցիալական փաթեթների ապահովում**
- Նախատեսվում է 9,949.8 մլն դրամ՝ 138192 շահառուի համար (2021թ.՝ 10,619.4 մլն դրամ՝ 147493 շահառուի):
- **2022թ. համար ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում**
- Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցությանն ուղղվել է 3,317.9 մլն դրամ (2021թ.՝ 3,696.8 մլն դրամ):

- Վերջին տարիներին երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների արդյունքում կրճատվել է համակարգի մանկատներում խնամվող երեխաների թիվը.
  նախատեսվում է իրականացնել 585 երեխայի խնամքն ու դաստիարակությունը:
- Մանկատների 9 շրջանավարտների համար կշարունակվեն միանվագ դրամական օգնության տրամադրումը և 18-23 տարեկան 7 շրջանավարտների համար բնակարանների վարձակալությունը:
- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ապահովելու, նրանց խնամքի, այլընտրանքային ծառայություններ տրամադրելու նպատակով շարունակվելու է 6 աջակցության կենտրոնում սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրումը 600 երեխայի և նրանց ընտանիքներին:
- Կարճաժամկետ խնամք իրականացնելու նպատակով երեք ճգնաժամային կենտրոններում շարունակվելու է 0-18 տարեկան 125 երեխաների կարճաժամկետ շուրջօրյա խնամքի ծառայությունների իրականացումը:
- Պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից հանրապետության բոլոր մարզերում կիրականացվի երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում 1100 երեխաների և նրանց ծնողներին,
- 100 ընտանիքի կտրամադրվի աջակցություն բնաիրային փաթեթի տեսքով՝ նպաստելով 500 երեխաների ընտանիքներ վերադառնալուն և վերջիններիս մուտքը այդ հաստատություններ կանխարգելելուն:
- Կշարունակվի խնամատար ընտանիքում 88 երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրումը:
- Կշարունակվի մանկատներում խնամվող 7-18 տարեկան դպրոցահասակ 250 երեխայի համար ընտանեկան միջավայրին մոտ միջավայր ապահովելու և կենցաղային որոշակի հմտությունների ձեռքբերման նպատակով երեխաներին դրամական աջակցության տրամադրումը:
- Հանրապետությունում մարդկանց շահագործման երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովման նպատակով կշարունակվեն նաև թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց աջակցության, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրումը, որից կօգտվեն 1475 շահառու:
- **2022թ. համար խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց**
- 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ մատուցելուն ուղղվել է 2,975.2 մլն դրամ:

- Շուրջօրյա խնամքի ծառայություններ են տրամադրվելու 1215, տնային պայմաններում խնամքի ծառայություններ (այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ևս)՝ 1930, ցերեկային կենտրոններում՝ 1600, անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում՝ 80, հատուկ բնակելի տանը կացարանով ապահովման ծառայություններ՝ 57 և կոմունալ ծառայությունների փոխհատուցում՝ սոցիալական տներում բնակվող 100 շահառուի:

- Վերանայվելու են ծառայությունների մատուցման չափորոշիչները, արդյունքում բարելավվելու է մատուցվող ծառայությունների որակն ու մեծանալու է հասցեականությունը, ներդրվող համայնքահեն ծառայություններում կարևորություն է տրվելու համայնքի մասնակցությանը և ավելի մեծ թվով հասարակական կազմակերպությունների ընդգրկվածությանը:
- **2022թ. համար բնակարանային ապահովման ուղղությամբ**
- Կշարունակվի ՊՆ համակարգի զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման ծրագիրը, որի համար կտրամադրվի 468.5 մլն դրամ՝ 59 զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների աջակցելու նպատակով (2021թ.՝ 66 ընտանիք), այդ թվում՝ 17 ընտանիք Երևան քաղաքում, 42 ընտանիք՝ մարզերում:
- 2022թ. բնակարանային շինարարության շրջանակում նախատեսվում է կառուցել թվով 1 օբյեկտ, որի համար տրամադրվել է 311.9 մլն դրամ, որի շահառուներ են Սպիտակ քաղաքի ոչ հիմնական շինություններում բնակվող, սոցալապես անապահով, բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող թվով 36 ընտանիք:
- **2022թ. համար հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության բնագավառում**
- Այս ուղղությամբ նախատեսվում է 2,259.3 մլն դրամ (2021թ.՝ 1,193.3 մլն դրամ):
- Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվելու են աջակցող միջոցներ (այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն, շուրջ տարեկան 14900 աջակցող միջոց)՝ հասարակական կյանքում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով:
- Շարունակվելու է պետական աջակցություն ցուցաբերվել հասարակական կազմակերպություններին՝ ցերեկային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով:
- **2022թ. համար ավանդների և այլ փոխհատուցումների բնագավառում**
- Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման համար նախատեսվում է 1,515.0 մլն դրամ, փոխհատուցում կտրամադրվի շուրջ 7900 շահառուի: Փոխհատուցում ստանալու իրավունք կտրվի նաև մինչև 1939թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված ավանդատուներին:
- **2022թ. համար սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների ուղղությամբ**
- 2022թ. նախատեսվել է 3,009.1 մլն դրամ: Ավարտին կհասցվեն 13 ՄՍԾՏԿ-ների և Միասնական սոցիալական ծառայության կենտրոնական գրասենյակի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև տարածքային կենտրոնների կահավորման միջոցների և սարքավորումների ձեռքբերում, մեկ միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրում:

ԲԱԺԻՆ 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Աղյուսակ 2. Ոլորտի պետական ծրագրերը

h/h	Ծրագրի անվանումը	2022թ., մլն դրամ	2021թ., մլն դրամ	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ, %	2021/2020թ., մլն.դրամ	2021/2020թ., %	կշիռը ընդամենը ոլորտի հատկացումների աճում, տոկոս
	Ընդամենը՝ ԱՍՀՆ	579,778.90	503,670.60		76,108.30	15.1	100

1.	Կենսաթոշակային ապահովություն	384,452.80	352,682.70	66.3	31,770.10	9.0	41.7
2.	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	30,921.30	37,692.30	5.3	-6,771.00	-18.0	-8.9
3.	Սոցիալական ապահովություն	70,518.00	30,862.60	12.2	39,655.40	128.5	52.1
4.	Ժողովրդագրական վիճակի բարելավում	31,442.00	25,249.70	5.4	6,192.30	24.5	8.1
5.	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	18,797.50	14,351.90	3.2	4,445.60	31.0	5.8
6.	Պարգևավճարներ և պատվովճարներ	10,989.30	11,261.30	1.9	-272.00	-2.4	-0.4
7.	Սոցիալական փաթեթների ապահովում	9,949.80	10,619.50	1.7	-669.70	-6.3	-0.9
8.	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	7,165.40	5,612.10	1.2	1,553.30	27.7	2.0
9.	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	3,317.90	3,696.70	0.6	-378.80	-10.2	-0.5
10.	Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց	2,975.20	3,104.50	0.5	-129.30	-4.2	-0.2
11.	Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ	3,009.10	2,112.20	0.5	896.90	42.5	1.2
12.	Զբաղվածության ծրագիր	1,564.40	2,100.80	0.3	-536.40	-25.5	-0.7
13.	Բնակարանային ապահովում	780.40	1,790.60	0.1	-1,010.20	-56.4	-1.3
14.	Ավանդների փոխհատուցում	1,515.00	1,212.00	0.3	303.00	25.0	0.4
15.	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	2,259.30	1,193.30	0.4	1,066.00	89.3	1.4
16.	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր	121.80	128.3	0.0	-6.50	-5.1	-0.01

Գծապատկեր 26. Կենսաթոշակային պաշտպանության ապահովության մասնաբաժինը ընդամենը՝ սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեում



Գծապատկեր 27. Սոցիալական ոլորտի, ընդամենը՝ 579,778.9 մլրդ դրամ ծրագրերի բաշխվածությունը



- 2022թ. սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի 66.3 տոկոսը ուղղվում է «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրին: Հաջորդ խոշոր երեք ծրագրերն են՝ «Սոցիալական ապահովություն», «Ժողովրդագրական վիճակի բարելավում» և «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրերը, որոնք կազմում են սոցիալական պաշտպանության բյուջեի, համապատասխանաբար, 12.2; 5.4 և 5.3 տոկոսները:
- 2022թ. բյուջետային ռեսուրսները 2021 թ-ի. նկատմամբ աճել են 15.1 տոկոսով, որում բյուջետային ռեսուրսների աճի տեսանկյունից առաջին դիրքում է «Սոցիալական ապահովություն» ծրագիրը, որին

բաժին է ընկնում ոլորտի բյուջեի 76,108.30 մլն դրամ աճի մոտ 52.1 տոկոսը կամ 39,655.40 մլն դրամ: Արդյունքում, ծրագրի բյուջեն 2021թ. նկատմամբ աճել է 128.5 տոկոսով:

- Ոլորտի հաջորդ կարևոր ուղղություններ են համարվել «Սոցիալական ապահովություն» ծրագիրը, որը կազմում է բյուջեի աճի 41.7 տոկոսը:
- Միաժամանակ, 2022թ. բյուջետային ռեսուրսները 2021թ. նկատմամբ որոշ ծրագրերի մասով նվազել է 9,773.9 մլն դրամով: Բյուջետային ռեսուրսների նվազման տեսանկյունից առաջին դիրքում է «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն» ծրագիրը, որին բաժին է ընկնում 2022թ. բյուջեի աճի մեջ 8.9 տոկոս կամ 6,771.0 մլն դրամ նվազում: Արդյունքում, ծրագրի բյուջեն 2021թ. նկատմամբ նվազել է 18.0 տոկոսով: Այս իմաստով հաջորդը «Բնակարանային ապահովում» (բյուջեի աճի մեջ 20.7 տոկոս կամ 2,232.5 մլն դրամ նվազում, արդյունքում, բյուջեն 2021թ. նկատմամբ նվազել է 55.5 տոկոսով) և «Ավանդների փոխհատուցում» (բյուջեի աճի մեջ 6.8 տոկոս կամ 730.9 մլն դրամ նվազում, արդյունքում, բյուջեն 2021թ. նկատմամբ նվազել է 37.6 տոկոսով) ծրագրերն են:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ

Առողջապահության ոլորտի քաղաքականության հիմքում դրված են.

- Բուժօգնության տրամադրման հավասարության, արդարության, մատչելիության և բժշկական օգնության որակի ապահովումը:
- Քաղաքականության առաջնահերթություններն են համարվում հետևյալ ծառայությունները՝
- Առողջության առաջնային պահպանումը
- Մոր և մանկան առողջությունը
- Վերարտադրողական առողջության պահպանումը
- Մարզային առողջապահական կազմակերպությունների արդիականացումը

Կառավարությունը կարևորում է՝

Հիվանդությունների կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավումը,

Մահացության ցուցանիշների կրճատումը, հանրապետության ամբողջ տարածքում, ժամանակակից բժշկական ծառայությունները հասանելի դարձնելը,

Հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Կաճի թիրախային խմբերի (1-6 տարեկան) պատվաստումների ամբողջական ընդգրկվածության տոկոսը՝ 95%-ից մինչև 99%:
- Հանրապետությունում 10%-ով կնվազի ծխողների քանակը:
- Կնվազի վարակիչ հիվանդություններից (տուբերկուլոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ) մահացության մակարդակը, մահվան դեպքերի քանակը 100,000 բնակչի հաշվով 7.94-ից կնվազի մինչև 7.54:
- Կնվազեն ոչ վարակիչ հիվանդություններից մահացության մակարդակները, մահվան դեպքերի քանակները 100,000 բնակչի հաշվով՝

  -Չարորակ նորագոյացությունների դեպքում՝ 189.6-ից մինչև 183.9

  -Շաքարային դիաբետի դեպքում՝ 39.2-ից մինչև 38

  -Արյան շրջանառության համակարգի հիվանդությունների դեպքում՝ 454.5-ից մինչև 440.9:
- Մանկական (0-1 տարեկան) մահացության մակարդակը 1,000 կենդանածնի հաշվով կկրճատվի՝ 8.2-ից 7:
- Մայրական մահացության մակարդակը, 100,000 կենդանածնի հաշվով կկրճատվի՝ 16.3-ից 15:
- Պետական բյուջեի միջոցների հաշվին առողջության ապահովագրություն տրամադրված անձանց թիվը կավելանա՝ 100,000-ից մինչև 300,000:

- Հիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ ստացած սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների թիվը ընդհանուր շահառուների թվում կավելանա՝ 18.1%-ից մինչև 20%:
- Առանձին հիվանդություններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովվածությունը կաճի՝ 95%-ից մինչև 98%:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններին պետական բյուջեից կհատկացվի 27,4 մլրդ դրամ:
- Շտապ բժշկական օգնության (ՇԲՕ) ծառայությանը կուղղվի 5,0 մլրդ դրամ:
- 2022թ. իմունականխարգելման ոլորտին ուղղվող ֆինանսավորումը կկազմի 3,5 մլրդ դրամ:
- Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայությունների համար պետական բյուջեից կհատկացվի 3,2 մլրդ դրամ:
- Անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունների համար պետական բյուջեից կհատկացվի ,7 մլրդ դրամ:
- Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնությանը կուղղվի 5.0 մլրդ դրամ:

Գծապատկեր 28. Առողջապահության պետական ծրագրերը



Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 991,9 մլն դրամ:

ՄԻԳՐԱՑԻԱ

Միգրացիոն ոլորտի զարգացման նպատակով կառավարությունը նախատեսում է՝

- 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրի իրականացման շարունակում

- ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրմանն ուղղված գործողությունների իրականացում,

- ՀՀ վերադարձվող քաղաքացիների վերինտեգրմանն ուղղված ծրագրերի ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի վերացման նպատակով աշխատանքների իրականացում

- Միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում,

- Օտարերկրացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության տրամադրման միասնական թվայնացման համակարգի ներդրման աշխատանքների իրականացում: Օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակի գործարկում:



ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ-ում ապաստան հայցող և փախստական ճանաչված անձանց ՀՀ-ում ինտեգրման քաղաքականության իրագործման գնահատման արդյունքներ:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Կպահպանվեն փախստականների ինտեգրմանն ուղղված միջոցները:

2021 թվականի 2.270 մլրդ դրամի դիմաց 2022թ. այս հատկացումները կկազմեն 1,607 մլն դրամ:

Կշարունակվի 1988-1992 թվականներին բռնագաղթված և ՀՀ-ում ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային ապահովման նոր քաղաքականությունը և նշված շահառու ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությանը, ինչպես նաև Կշարունակվեն նաև միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման, ապաստան հայցողներին դրամական փոքրածավալ օգնության տրամադրման, փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց բնակարանների վարձակալության ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև քաղաքացիական կողմնորոշման դասընթացների կազմակերպմանն ուղղված աշխատանքները, ՀՀ վերադարձվող քաղաքացիներին տրամադրվող աջակցությունը և խորհրդատվությունը: :Կգործարկվի օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակը Միգրացիոն ծառայությանը կուղղվեն աշխատանքային գործունեության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու, երկարաձգելու, ժամանակավոր :կացության քարտը վերականգնելու համար գանձվող պետական տուրքերը

ԲԱԺԻՆ 3. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Աջակցություն փախստականների ինտեգրմանը



Միգրացիոն բնագավառում պետական քաղաքականության մշակում և իրականացում



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին կրթության ոլորտում կշարունակվեն հիմնական բարեփոխումները, որոնց նպատակն է՝

- ✓ Կրթության որակի բարձրացումը,
- ✓ Բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության մատչելիության ապահովումը,
- ✓ Համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը,
- ✓ Կրթական ենթակառուցվածքների բարելավումը:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2022Թ. ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է՝



ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (2023թ.)

- Պարտադիր կրթության բոլոր երեք մակարդակներում ընդգրկվածությունն առկա առավելագույն 92.9%-ից կաճի և 2024թ. կկազմի 99%:

- Արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածությունը մինչև 2024թ. կաճի 2%-ով
- 2023թ. ԳՏՃՄ /գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա, STEM/ մասով բարելավված ենթակառուցվածքներով հանրակրթական դպրոցների թիվը 106-ից կհասնի 721-ի,
- 2024թ. 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում կհասնի 70%-ի,
- 2024թ. ՀՀ մարզերի բոլոր դպրոցների տարրական դասարանների և նախակրթարանների սովորողների համար կապահովվի դպրոցական սնունդ՝ ՀՀ պետական բյուջեից
- 2024թ. դրությամբ կամավոր ատեստավորմանը մասնակցած հանրակրթական դպրոցի ուսուցիչների թիվը կկազմի 46%:



- 2023թ. հանրապետության 100 դպրոցներ կհարմարեցվեն հաշմանդամություն ունեցող աշակերտներին:
- Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների 95%-ը կընդգրկվի հանրակրթական դպրոցներում (2023թ):
- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունվածների թիվը 25.2%-ից կաճի և 2024թ. կկազմի 33%:

- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ 6 ամսվա ընթացքում աշխատանք գտնողների ցուցանիշը 2024թ. կհասնի 39.4%-ից 45.2%-ի:
- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2024թ. աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող նոր մասնագիտությունները կավելանան 7-ով:
- Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 18%-ից կաճի և 2022թ. կկազմի 24%:

- Խոցելի, սոցիալապես անապահով և սահմանամերձ համայնքների ընտանիքների ուսանողների տեսակարար կշիռը կաճի 2022թ. 4.1%-ից և կկազմի 6.6%:

ԲԱԺԻՆ 2. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՀԱՍՆԵԼՈՒ ՎԵՐՈՆՇՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

2022 թվականին սննդով կապահովվեն ՀՀ Արագածոտնի, Արարատի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու մարզերի, սեպտեմբերից՝ նաև Արմավիրի մարզի պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և նախակրթարաններում ընդգրկված շուրջ 96.0 հազար երեխա: Երեխաների սննդով ապահովման գծով գումարը կկազմի շուրջ 2061.8 մլն դրամ:



Դպրոցներում ԳՏՃՄ կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման ուղղությամբ բյուջետային հատկացումները կկազմեն 858.6 մլն դրամ՝ 2021 թվականի 767.1 մլն դրամի դիմաց: Ծախսերը նախատեսվել են ինժեներական 921 լաբորատորիայի խմբակավարների վարձատրության գծով՝ 2021 թվականի 777-ի դիմաց:

Հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրելու նպատակով հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցմանը կուղղվի շուրջ 515.8 մլն դրամ՝ 2021 թվականի 332.3 մլն դրամի դիմաց:
Շուրջ 4,7 հազ. մանկավարժ և 2,1 հազ. երեխա կստանա փոխհատուցում:

Միջազգային օլիմպիադայի նախապատրաստում: 2022թ. նախատեսվում է ՀՀ-ում անցկացնել կենսաբանության միջազգային օլիմպիադա, որի նախապատրաստական աշխատանքները սկսվել են 2020թ-ից և այդ նպատակին 2022 թ-ին կուղղվի 324.2 մլն. դրամ:

- Դպրոցահասակների համար կիրականացվեն մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ «Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում», «Քո արվեստը դպրոցում», «Դասական երաժշտություն «Դաս Ա», «Քո գիտությունը դպրոցում», տարբեր տարիքային խմբերի աշակերտների համար՝ ամառային և ռազմամարզական ճամբարների կազմակերպում:

Հանրակրթական դպրոցների աշակերտները կխրախուսվեն անվանական կրթաթոշակով, որի համար հանրապետական և միջազգային օլիմպիադաների հաղթող դպրոցականներին 2022 թվականին կհատկացվի ընդհանուր առմամբ 38.7 մլն դրամ:

2022թ., որպես նոր նախաձեռնություն, նախատեսվել է 237.0 մլն դրամ՝ սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան 1670 երեխայի նախադպրոցական կրթության ապահովման համար և 3,276.0 մլն դրամ՝ «Մոդուլային» տիպի մանկապարտեզների կառուցման աշխատանքների համար: 2022թ. 3276.0 մլն դրամ նախատեսվել է 22 «մոդուլային» տիպի մանկապարտեզի նախագծման և կառուցման համար (2021 թվականին նշված ծախսը նախատեսված չի եղել):

- Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման համար 2022թ. նախատեսվել է 3227.6 մլն դրամ՝ 2021թ. 2,638.5 մլն դրամի դիմաց: Համակարգի ամբողջական ներդրումն ավարտվել է 2021թ.: Գումարն ավելացել է մանկավարժահոգեբանական կենտրոնների թվի ավելացման արդյունքում: Կիրականացվեն հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման միջոցառումներ: ԱՄՆ ՄԶԳ «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կիրականացվեն առնվազն 100 հանրակրթական դպրոցի փոքրածավալ վերանորոգումներ, ներառյալ՝ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, ռեսուրս սենյակներ և 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի փոքրածավալ վերանորոգում:

Դպրոցահասակների համար կիրականացվեն մի շարք միջոցառումներ:

«Հայաստանում ԵՄ-ն հանուն նորարարության» դրամաշնորհային փորձնական ծրագիր, որի շրջանակում Տավուշ մարզի 80 դպրոց կվերազինվեն լաբորատոր սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով և գույքով: Եվրամիության աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական և մարզական հաստատություններին գույքով և տեխնիկայով ապահովման նպատակով, 2022թ. համար նախատեսվում է հատկացնել 6,606.4 մլն դրամ դրամաշնորհ:

Հայաստանում ԵՄ-ն հանուն նորարարության» դրամաշնորհային փորձնական ծրագրի շրջանակներում ԳՏՃՄ ոլորտներում կրթության բարելավմանը կհատկացվի 1810.5 մլն դրամ, որի շրջանակում Տավուշ մարզի 80 դպրոց կվերազինվեն լաբորատոր սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով և գույքով:

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի գծով 2022 թվականին նախատեսվել է 22,457.0 մլն դրամ՝ 2021 թվականի 13,559.7 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 8,897.3 մլն դրամով կամ 65.6 տոկոսով, որից 3,446.5 մլն դրամը՝ «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման գծով՝ պայմանավորված 13.05.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 747-Լ որոշմամբ, համաձայն որի նախատեսվում է 2022-2025 թվականներին ՀՀ պետական բյուջեից գիտական կադրերի աշխատավարձի աստիճանական ավելացում; 4,196.8 մլն դրամը՝ «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման գծով՝ միջոցառման շրջանակում իրականացվելիք դրամաշնորհային

նոր մրցույթների համար, որոնց համար որպես արդյունքային ցուցանիշներ են սահմանվում միջազգային չափանիշներին համապատասխան գիտական արդյունքները:

Գծապատկեր 29. ՀՀ պետական բյուջեում կրթության ծրագրերի մասնաբաժինը կրթությանը հատկացված ծախսերի մեջ 2020-2022թթ.



- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պահպանմանը կուղղվի 1,792.9 մլն դրամ, որը 2021 թվականի ծախսերի նկատմամբ աճել է 3 տոկոսով:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

▪ **Կառավարության մշակութային քաղաքականությունն ուղղված է**

- ✓ հայկական պատմամշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանմանը և հանրահռչակմանը,
- ✓ մշակութային կյանքին հանրային լայն մասնակցության ապահովմանը, մշակութային լայն քարոզչության իրականացմանը և մշակութային հաստատություններ՝ քաղաքացիների հոսքի քաջալերմանը,
- ✓ ստեղծարար, տաղանդավոր անհատ արվեստագետների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը,
- ✓ Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող արժեքահենք և մշակութահենք նպատակային ծրագրերի իրականացմանը:

▪ **Սպորտի ոլորտում Կառավարությունը նպատակ է հետապնդում**

- ✓ նպաստել մարզիկների համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,
- ✓ խթանել առողջ ապրելակերպը՝ մասսայական սպորտային միջոցառումներում բնակչության տարիքային և սոցիալական տարբեր խմբեր ներգրավելու միջոցով բարելավել մարզական ենթակառուցվածքները,
- ✓ աջակցել մանկապատանեկան սպորտին:

▪ Երիտասարդության ոլորտում **բնագավառում Կառավարությունը նպատակ է հետապնդում**

- ✓ ակտիվացնել հասարակական կյանքում երիտասարդների մասնակցությունը,
- ✓ մեծացնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունները,
- ✓ ձևավորել երիտասարդության ներուժի բացահայտմանն ու զարգացմանը նպաստող համայնքային երիտասարդական միջավայրեր,
- ✓ նպաստել երիտասարդների իրազեկվածության բարձրացմանը՝ մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ կանխարգելման վերաբերյալ,
- ✓ աջակցել երիտասարդ ընտանիքներին՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում:



ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- 2022թ. կարտադրվեն թվով 10 խաղարկային, մուլտիպլիկացիոն, վավերագրական կինոնկար՝ այդ թվում շարունակվող և նոր սկսվող: Հայաստանում կկազմակերպվեն 3 միջազգային կինոփառատոն, հայկական կինոնախագծերից 6-ը կմասնակցեն միջազգային կինոծրագրերին:
- Կընդլայնվի ժամանակակից արվեստի ոլորտում իրականացվող նախագծերին տրամադրվող պետական աջակցությունը: 2022 թվականին նախատեսվում է իրականացնել 66 նախագիծ, միջազգային նախագծերին կմասնակցեն 10 թատերահամերգային հայաստանյան խումբ և 25 արվեստագետ:

- Կընդլայնվեն Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արվեստի միջազգային նախագծերը՝ 2022 թվականին ավելանալով 7-ով (5-ից 12):
- 2022թ. կիրականացվեն թանգարանային հավաքածուների և ոչ նյութական ժառանգության միջազգայնացման 8 նախագիծ:
- Հանրապետությունում ազգային, փողային և լարային նվագարանների ուսուցման ծրագրի շրջանակում ՀՀ պետական բյուջեից ուսման վարձի փոխհատուցում կստանա 1181 աշակերտ, որը կազմում է ընդհանուր ուսուցում ստացող աշակերտների 19%-ը:
- «ԱՊՀ ազգային ստեղծագործության և մշակութային ժառանգության տարվան նվիրված» միջոցառումների շրջանակում 2022թ. Գյումրիում կիրականացվի «Վարպետների քաղաք» արհեստների փառատոն:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ/

Մշակույթի ոլորտի համար 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 16,546.9 մլն դրամ՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով հաստատված 15,403.9 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 1,143.0 մլն դրամով, կամ 7.4 տոկոսով:

Մշակույթի ծրագրերի բյուջեի 62.3 տոկոսը բաժին է ընկնում Արվեստների ծրագրին, որի ֆինանսավորման ծավալները 2021թ. համեմատ աճել են 17.9 տոկոսով:

Գծապատկեր 30. Ըստ բյուջետային ծրագրերի՝ բյուջետային հատկացումները բաշխվել են հետևյալ համամասնությամբ



Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց կմատուցվեն գրահրատարակչական նոր ծառայություններ: Գրահրատարակչության և գրադարանների ծրագրով նախատեսվում է Բրայլյան տառատեսակով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստում և «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ, որոնց կուղղվի 9.8 մլն դրամ:

2022թ. կիրականացվի «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականություն» դրամաշնորհային ծրագիրը, որի համար նախատեսվում է 36.0 մլն դրամ:

2022թ. պետական բյուջեով նախատեսվում է 5 թատերահամերգային կազմակերպության նյութատեխնիկական բազայի համալրում, որի համար կտրամադրվի 767.5 մլն դրամ: «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի հակահրդեհային համակարգի և ցածր լարման կայանների նորոգման աշխատանքների համար նախատեսվում է 78.5 մլն դրամ: Շարունակվում է և ավարտին կհասցվի «Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքները՝ 138.1 մլն դրամ:

Պատմության և մշակույթի հուշարձանների պեղման, ուսումնասիրման և վերականգնման աշխատանքների համար նախատեսվում է շուրջ 108.1 միլիոն դրամ:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ /ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ/

- 2022 թվականին կաճեն ՀՀ հավաքական թիմերի մազիչներին և միջազգային մրցաշարերում բարձր արդյունքների հասած մարզիկներին պատվովճարների և անվանական թոշակների գումարները՝ պայմանավորված ինչպես պատվովճար ստացող չեմպիոնների ցանկում նոր շահառուների ընդգրկմամբ, այնպես էլ պատվովճարի և պարգևավճարների չափի ավելացմամբ՝

  պատվովճարների գծով՝ 19.4 մլն դրամով,

  անվանական թոշակների գծով՝ 467.3 մլն դրամով:

- Աշխարհի չեմպիոնների պատվովճարը նախկին 55.0 հազարի փոխարեն դարձել է 100.0 հազար դրամ, օլիմպիական չեմպիոններինը՝ 100.0 հազարից՝ 200.0 հազար դրամ:
- 2022 թվականին 8.5 մլն դրամով կաճեն ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններին հատկացվող ծախսերը: Ակնկալվում է առնվազն 730 անձի մասնակցություն, նախկին 598-ի փոխարեն:

- Մասսայական սպորտում նախատեսվում է անցկացնել 5 նոր միջոցառում՝ 4-ը «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական մրցաշարերի շրջանակում (խճուղային հեծանվավազք, սեղանի թենիս, լող, կրոսավազք՝ շահառուները՝ 18 տարեկան և բարձր տարիքի տղամարդիկ ու կանայք) և 1-ը՝ մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում: 2021 թվականին շուրջ 2000 անձ մասնակցել է «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի և «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» կրոսավազքի սիրողական մրցաշարերին (2022 թվականին ակնկալվում է ավելի քան 2500 հոգու մասնակցություն):
- **«Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար» և «Մարզական բյեկտների շինարարություն» միջոցառումների գծով նախատեսվել է համապատասխանաբար՝ 1,109.6 և 1,581.6 մլն դրամ (իրականացվելու են Արթուր**

Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոցի և 3 մարզական օբյեկտների շինարարական աշխատանքներ):

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ/

- Սպորտի համար 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 5,644.4 մլն դրամ՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով հաստատված 2,726.5 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 2,917.9 մլն դրամով, կամ 107.0 տոկոսով:

Գծապատկեր 31. Ըստ բյուջետային ծրագրերի՝ բյուջետային հատկացումները բաշխվել են հետևյալ համամասնությամբ



ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ /ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ/

«Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի հատկացումները 2022 թվականին կկազմեն 1,737.5 մլն դրամ՝ նախորդ 1,300.9 մլն դրամի փոխարեն: Միջոցները նախատեսված են երիտասարդ ընտանիքների հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը: 2022 թվականին ծրագրի շահառուների թիվը կավելանա 1100-ով՝ ընդհանուր թիվը կկազմի 6825:

Նախատեսվում է երկու համայնքներում ստեղծել «երիտասարդական միջավայր», որոնք կհանդիսանան երիտասարդների ներուժի բացահայտման, զարգացման, համախմբման, հանրային կյանքի տարբեր ոլորտներին ներգրավման նպատակներով գործող միջավայրեր:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ / ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ/

«Երիտասարդության» ծրագրին ուղղվող միջոցները 59.6 մլն դրամով կամ 3.2 %-ով կաճեն՝ 2022 թվականին կազմելով 1,906.1 մլն դրամ՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով հաստատված 1,846.5 մլն դրամի դիմաց:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԴԻՈ

Բնագավառին ուղղված հատկացումները նպատակ ունեն՝

- ✓ ապահովելու շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվության ստեղծումն ու տարածումը,
- ✓ ապահովելու բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բովանդակություն,
- ✓ տրամադրելու անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին,
- ✓ լուսաբանելու պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները,
- ✓ ապահովելու խոսքի ազատության, բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ՝ ձևավորելով հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր, վարքագծի օրինակներ,
- ✓ կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստելու հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցելու երեխաների կրթությանն ու դաստիարակությանը,
- ✓ Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնելու Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավելու և մասնակից դարձնելու հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք կապերի վերաիմաստավորմանը, Հայրենիքի զարգացմանը և հայրենադարձությանը:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ➢ Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի եթերում նախատեսվում է պահպանել 2021 թվականի օրիգինալ հաղորդումների գծով ելակետային ցուցանիշը՝ տարեկան հեռարձակել 3030 ժամ օրիգինալ հաղորդումներ,
- ➢ Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի եթերում նախատեսվում է պահպանել 2021 թվականի հաղորդումների բազմազանության գծով ելակետային ցուցանիշը՝ տարեկան հեռարձակել 55 հաղորդաշար,

- ➢ Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի եթերում նախատեսվում է ապահովել 48 տոկոս օրիգինալ հաղորդումների տեսակարար կշիռ հեռարձակվող հաղորդումների ընդհանուր եթերաժամանակի մեջ՝ 2021 թվականի ելակետային 45-48 տոկոս տեսակարար կշռի դիմաց:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ➢ «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» ծրագրին կուղղվի 7,634.7 մլն դրամ՝ նախորդ տարվա հաստատված մակարդակից 8.3 տոկոսով ավել: Նշված գումարից «Հանրային հեռարձակողի խորհրդի կառավարում, համակարգում և մոնիտորինգ»

միջոցառմանը կուղղվի 169.4 մլն դրամ:

- «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմանը կուղղվի 6,327.0 մլն դրամ, որը նախատեսվում է Հանրային հեռուստաընկերության «Առաջին», «Միջազգային» և «Լրատվական» ալիքներից յուրաքանչյուրի եթերում 8,760 ժամ հեռուստահաղորդումների հեռարձակման համար:
- «Ռադիո ծառայություններ» միջոցառմանը կուղղվի 925.0 մլն դրամ, որը նախատեսված է Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր», «Երկրորդ ծրագիր», «Հոգևոր-մշակութային», «Արևիկ» և «Մշակույթ» ռադիոալիքներից յուրաքանչյուրի եթերում 8,760 ժամ, իսկ ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում 821.3 ժամ ռադիոհաղորդումների հեռարձակման համար:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից իրականացվում է Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգում ծրագիրը, որին կուղղվի 334.7 մլն դրամ 2021 թվականի՝ 330.4 մլն դրամի դիմաց:

Տնտեսական զարգացման նախաձեռնություններում կառավարությունը կարևորում է քաղաքացիների նորարարական ներուժի, ստեղծագործելու ձիրքի և գործարար նախաձեռնողականության խրախուսումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավումը և տեխնոլոգիաների կլանումը:

Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի գծով 2022 թվականին նախատեսվել է հատկացնել 660 մլն դրամ: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: Աջակցել ներդրողների սպասարկմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը և հետներդրումային սպասարկմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է, արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) 6 միջոցառումների կազմակերպում և իրականացում, միջազգային 7 ցուցահանդեսներին մասնակցության ապահովում, ուսուցման դասընթացի կազմակերպում, գործարար 5 համաժողովների (ֆորումների), 50 ներդրումային ծրագրերի ուղեկցում, ՀՀ-ում գործող օտարերկրյա ներդրողների 100 հետներդրումային շարունակական սպասարկում, ներդրումների ներգրավման ու գործարար կապերի հաստատման նպատակով ՀՀ-ում և արտերկրում 5 միջոցառումների կազմակերպում, ներդրողների, գործարարների համար նախատեսված ՀՀ գործարար և ներդրումային դաշտը ներկայացնող, ինչպես նաև ոլորտային 4 ուղեցույցների և շնորհանդեսների նախապատրաստում, ՀՀ ներդրումային միջավայրի, գործարար և արտահանման հնարավորությունների մասին 4 տեսահոլովակների նախապատրաստում, արտաքին 2 գովազդային վահանակների տեղադրում:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում 39.7 տոկոսից կաճի և 2026 թվականը կկազմի 55 տոկոս:
- Ապրանքների արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 19.7 տոկոսից կաճի և 2024 թվականին կկազմի 21 տոկոս:
- Հայաստանի գրավչությունը կբարձրանա. զբոսաշրջիկների քանակի տարեկան աճը կկազմի առնվազն 10 տոկոս:
- Նախատեսվում է գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին 200 գործարար ուսուցողական, 4000 տեղեկատվական և խորհրդատվական, 30 ֆինանսական և ներդրումային աջակցության տրամադրում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում: 2019-ին մշակվել է ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը, որով նախատեսվում է պետական աջակցության գործիքների միջոցով ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացումը, ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացումը, ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովումը, ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովումը: Ծրագրի բյուջեն կազմում է 160.1 մլն դրամ, որն ուղղվելու է ՓՄՁ սուբյեկտների տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերմանը: 2022թ. ընթացքում տեղեկատվական և խորհրդատվական ծառայություն կմատուցվի գործող և սկսնակ 4000, այդ թվում կանանց՝ 1725, իսկ գործող և սնանկ 30 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն:

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներին նախատեսվում է հատկացնել 360.0 մլն. դրամ: Ծրագրով հիմնականում նախատեսվում են գործարար համաժողովներին կազմակերպում և մասնակցություն, մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում, հայկական ապրանքների առաջմղում:

«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում Աեետներդրումային սպասարկմանը» միջոցառման համար նախատեսվում է հատկացնել 300.0 մլն. դրամ, որը կուղղվի ներդրողների սպասարկմանը, ներդրումների խթանման աշխատանքների իրականացմանը, արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կազմակերպմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը և հետներդրումային սպասարկմանը:

ԵՄ աջակցությամբ նախատեսվում է նաև որակի ենթակառուցվածքի համակարգի արդիականացման նպատակով ՍՉԱՄ ՓԲԸ-ում տրամաչափարկման կարողությունների հիմնում, փորձարկման կարողությունների ընդլայնում՝ նոր լաբորատոր սարքավորումների ձեռքբերում, լաբորատորիաների վերազինում և ստեղծում:

Աղյուսակ 3. Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը

ՀՀ	Ծրագրի անվանումը	2022թ. բյուջե, մլն դրամ	2021թ. բյուջե, մլն դրամ	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ %	2022/2021թ. մլն դրամ	2022 /2021 թ. %
1.	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցում և վերացում	7,000.0	3,300.0	79	*3,700*	112
2.	Ներդրումների և արտահանման խթանում	660.0	1,395.0	7.5	*(735)*	(53)
3.	Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	160.1	183.1	1.8	*(23)*	(13)
4.	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	1,030.8	30.8	11.7	*1,000*	3,246

Ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության և խրախուսման, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման նպատակով 2022 թվականի պետական բյուջեից 544.3 մլն ՀՀ դրամ կհատկացվի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի իրականացմանը, որը կուղղվի լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության 5 ապրանքային շուկաների վերլուծության և 100 ուսումնասիրությունների ապահովմանը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջության ոլորտի տեսլականն է ունենալ աշխարհում ճանաչելի, հասանելի, որակապես կայուն և առաջարկների բազմազանությամբ հարուստ զբոսաշրջային նպատակակետ, որտեղ այցելուները կզգան և կմասնակցեն Հայաստանի հնագույն մշակույթի, պահպանված բնության և կենսակերպի զարգացող պատմությանը: Զբոսաշրջության զարգացմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսները 2022թ. կկազմի 5.8 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ կշարունակեն ՀՀ մարզերում կազմակերպվել ավանդական փառատոններ, կապահովվի հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրումը, միջազգային համագործակցության շրջանակներում միջոցառումների կազամկերպում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև զբոսաշրջային վայրերի բարելավված մուտքային 12 կմ ճանապարհահատվածի կառուցման, 3 զբոսայգիների բարելավման և փողոցային լուսավորության թվով 800 սյուների ու լամպերի փոխարինման աշխատանքներ: Զբոսաշրջության աջակցության հետ կապված գործողությունների միջոցով կստեղծվեն 1800 ժամանակավոր և մշտական աշխատատեղեր, միջազգային 3 ցուցահանդեսների մասնակցություն, պետական աջակցություն ՀՀ մարզերում 5 փառատոների կազմակերպմանը, աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական 5 կենտրոնների գործունեությանը, 1 միջազգային միջոցառման կազմակերպում:

Աղյուսակ 4. Զբոսաշրջային այցելություններ

2019թ.	Աճը 2018թ. համեմատ	2020 թ-ին՝ COVID-19-ի պայմաններում	Նվազումը 2019թ. համեմատ	2021 թ-ին՝ շարունակվող COVID-19 –ի պայմաններում	Աճը 2021թ-ին 2020-ի համեմատ	2024թ.	Աճը 2021թ. համեմատ
1.894.377	14.7 %	375.000	- 80.2 %	Շուրջ 850.000	55.9%	1.100.000	10 % -ի աճի դեպքում



ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հիմնական նպատակներ

- ✓ *Բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները,*
- ✓ *Բարելավել մատուցվող ծառայությունների որակը,*
- ✓ *Բազմազանեցնել զբոսաշրջային առաջարկները,*
- ✓ *Ընդլայնել ներքին զբոսաշրջության ծավալները,*
- ✓ *Ընդլայնել հասանելիությունը աշխարհի երկրների հետ*
- ✓ *Ընդլայնել զբոսաշրջիկների՝ Հայաստանում մնալու տևողությունը,*
- ✓ *Բարելավել Հայաստանի դիրքերը զբոսաշրջության համաշխարհային քարտեզի վրա,*
- ✓ *Բարելավել զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտը*
- ✓ *Կատարելագործել զբոսաշրջության կրթական և որակավորման համակարգը,*
- ✓ *Կատարելագործել վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդը և ստեղծել տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմ*

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ենթակառուցվածքների զարգացում

Համայնքներում զբոսաշրջության հավասարաչափ զարգացման, ծառայությունների բազմազանեցման և երկրորդային գրավչությունների բացահայտման հարցում մեծ դերակատարում ունեն զբոսաշրջային վայրերի, դեպի այդ վայրեր տանող ճանապարհների և հարակից ենթակառուցվածքների վիճակը: Բազմաթիվ բնության և մշակութային զբոսաշրջային գրավչություններ դուրս են մնում հիմնական առաջարկների ցանկից ոչ բավարար ներկայանալի միջավայրի և հասանելիության խնդիրների պատճառով: Ծրագրի շրջանակներում կշարունակվեն մեծածավալ շինարարական աշխատանքները զբոսաշրջային վայրերի բարեկարգման նպատակով: Ծրագրում ընդգրկված են Հայաստանի գրեթե բոլոր մարզերի դեպի զբոսաշրջային ուղղություններ տանող ճանապարհները կամ զբոսաշրջավայրերին հարակից ենթակառուցվածքների բարեկարգման աշխատանքներ: Ավարտվել են աշխատանքները Գառնիի

«Քարերի սիմֆոնիայի» տարածաշրջանի բարեկարգումը, դեպի Ստեփանավանի Դենդրոպարկ և Տաթևի վանական համալիր տանող ճանապարհների վերակառուցումը: Շարունակվում են Գորիս և Գյումրի քաղաքներում պատմական կենտրոնների վերականգնողական աշխատանքները: Ծրագրի նպատակի իրականացման համար 2022 թվականին նախատեսված է 5.4 մլրդ ՀՀ դրամի չափով ֆինանսավորում:

Ներքին տուրիզմ

Զբոսաշրջության զարգացման ծրագրին կուղղվի 15.0 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում կշարունակվեն ՀՀ մարզերում կազմակերպվել ավանդական փառատոներ:

Միջազգային համագործակցություն

Միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության ապահովման, այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման համար նախատեսվում է 19.0 մլն ՀՀ դր-ի հատկացում: Համագործակցության միջազգային պայմանագրեր են գործում 24 երկրների հետ, որոնց թիվը 2023 թվականին կհասնի 30-ի:

Վիճակագրություն

Վիճակագրական տվյալների հավաքագրումը, համադրումը և վերլուծությունը կիրառվում է հաջողված ռազմավարություն և ռազմավարական միջոցառումներ մշակելու համար: Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի բարելավմանը կուղղվի 1.2 մլն ՀՀ դրամ:

Մարքեթինգ

2022 թվականին միջազգային հարթակներում նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը, այդ թվում.

Հայաստանի պաշտոնական զբոսաշրջային կայքի կատարելագործում, որը կիրականացվի GIZ կազմակերպության ֆինանասական աջակցությամբ:

Թվային և ոչ թվային մարքեթինգային արշավների մշակման և իրականացման համար նախատեսվում է 5.0 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսավորում:

Հայաստանի 2022 թվականին նախատեսվում է Հայաստանի մասնակցությունը միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին, որին կուղղվի 75 մլն ՀՀ դրամ:

2022 թվականին կկազմակերպվեն «Road show»-ներ և ճանաչողական այցեր՝ հայտնի բլոգեր/վլոգերների, մեծ թիրախային լսարանով լրագրողների համար, որոնք կիրականացվեն նաև GIZ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Նախատեսվում է հայտնի ճամփորդական պարբերականների հետ համագործակցության նոր հնարավորությունների ստեղծում, որին նախատեսված է հատկացնել 14 մլն ՀՀ դրամ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» տարեկան պետական ծրագիր

- *Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագիր*

- *«Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) “Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում «ԵՄ-ն բիզնեսի համար. Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում մարքեթինգային միջոցառումների իրականացում:*

Աղյուսակ 5. Ոլորտի/բնագավառի պետական ծրագիր

	Ծրագրի անվանումը	2022թ. բյուջե, մլն դրամ	2021թ. բյուջե, մլն դրամ	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ %	2022/2021թ. մլն դրամ	2022/2021թ. %
1.	Զբոսաշրջության զարգացում	5,794.2	7,608.0	100.0	(1,813.8)	(23.8)

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՀՀ կառավարության գործունեության առաջնայնություններից մեկը եղել և մնում է բարձր տեխնոլոգիաների (ԲՏ) ոլորտի զարգացումը: Ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է, որը մեծապես նպաստում է երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը և երկրի վարկանիշի բարձրացմանը: ՀՀ կառավարության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը դիտարկվել է որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:
- **ՀՀ կառավարությունը բարձր տեխնոլոգիաների ոլորտում կիրականացնի հետևյալ հիմնական քայլերը .**

  - ✓ բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավում, տեխնոլոգիական ներուժի ներգաղթի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում,
  - ✓ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նորաստեղծ ընկերություններին ֆինանսավորում տրամադրելու միջոցով բարձր տեխնոլոգիական ոլորտում և տնտեսության բոլոր հատվածներում նոր արժեք ստեղծելու և տեխնոլոգիական լուծումների կիրառության ապահովում,
  - ✓ աշխարհի տեխնոլոգիական, կրթական, գիտահետազոտական կենտրոններից գիտելիքի և հմտությունների ներհոսքն ապահովելու, տեխնոլոգիական ոլորտում զարգացումը, ներդրումների ներգրավումը խթանելու նպատակով կրթական և աքսելերացիոն ծրագրերի իրականացում,
  - ✓ Հայաստանում Հանրապետությունում առկա տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոպարկերի, աքսելերատորների և ինկուբատորների կարողությունների բարելավում, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման նպատակով ՀՀ մարզերում նոր կենտրոնների հիմնում, այդ թվում՝ միջազգային համագործակցության հիման վրա,
  - ✓ «Ինժեներական քաղաքի» օրինակով ճարտարագիտական և արդյունաբերական հատուկ գոտիների ստեղծում և զարգացում և այլն:

- 2022 թվականին ոլորտի աշխատանքն ուղղված է լինելու հետևյալ երեք հիմնական նպատակների (ուղենիշների) կատարմանը.
  - ✓ Պաշտպանական տեխնոլոգիաների զարգացում՝ ռազմարդյունաբերություն, գիտահետազոտական ծրագրեր, տեխնոլոգիաների ներդրում,
  - ✓ Տաղանդի արտահոսքի կանխում և ներհոսքի հարուցում՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացում, ստարտափ և ինժեներական էկոհամակարգի զարգացում, Հայաստանը տարածաշրջանային կենտրոնի վերածում
  - ✓ ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի աճի նպաստում՝ արտաքին շուկաներում պրոյեկտների և արտադրանքի ներկայացման, տնտեսության և կառավարման համակարգի թվայնացման, արտահանման ծավալների ավելացման և տնտեսական աճի ապահովման միջոցով
- Վերոհիշյալ նպատակների իրականացման համար 2022թ. ՀՀ պետական բյուջեի նախագծով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը նախատեսվում է հատկացնել շուրջ 21.1 մլրդ դրամ, որից շուրջ 1.1 մլրդ դրամը աշխատակազմի պահպանման ծախսերն են:

Գծապատկեր 32. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի հիմնական ցուցանիշները 2017-2020թթ



- Միջնաժամկետ հեռանկարում (2021-2023թթ) նախատեսվել է ոլորտի ՀՆԱ-ի աճ տարեկան միջինը 25%-ի չափով, ինչը նշանակում է, որ ԲՏ (SS) ոլորտի ՀՆԱ-ն 2023թ. կհասնի 292.7 մլրդ դրամի 2018թ. 87,5 մլրդ դրամի փոխարեն: ՀՆԱ-ում ԲՏԱ շրջանառությունը 2019թ. հասել է 2.4 %-ի, 2018թ. 2.0% դիմաց:
- Նախարարության կողմից իրականացված պետական խթանման քաղաքականության շնորհիվ 2018 թվականի համեմատությամբ աճել է ոլորտի զբաղվածների թիվը 12357-ից հասնելով 18747-ի, ծառայությունների ծավալը 82.2 մլրդ դրամից աճել է մինչև 142.3 մլրդ դրամ: Զգալի աճել են ՀՀ պետական բյուջեից կատարվող հատկացումները, 2018թ. տարեկան շուրջ 330 մլն դրամից հասնելով 2.0 մլրդ դրամի, նպաստելով նաև ոլորտի ակտիվ կազմակերպությունների թվի աճին. 2018թ. 943-ի համեմատությամբ, 2020 թվականին կազմել է 1228

Գծապատկեր 33. ԲՏԱ հիմնական ցուցանիշները

ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Որպես վերջնական արդյունքի ցուցանիշ «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման» ծրագրի համար առաջարկվում է դիտարկել Բարձր տեխնոլոգիական ոլորտում զբաղվածության աճը, ոլորտի շրջանառության աճը և ՄԱԿ-ի

«Էլեկտրոնային կառավարման զարգացման ցուցանիշ (ինդեքս)»–ով Հայաստանի դիրքի բարելավումը, իսկ «Հեռահաղորդակցության ապահովում» ծրագրի համար՝ եթերի մաքրության ապահովման տոկոսը, ՀՀ բնակավայրերում թվային հեռուստահեռարձակման ապահովման տոկոսը և ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում լայնաշերտ ու բարձրորակ ինտերնետ կապով և պետական թվային ծառայությունների հասանելիության աճի տոկոսը:

ԲԱԺԻՆ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակներում նախատեսվում է՝

- Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,
- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը, ինչպես նաև միջազգային հայտնի աքսելերացիոն ծրագրերին մասնակցելու համար տրամադրվող աջակցության ապահովումը,
- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ֆորմատներում շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի օգտագործել Սփյուռքի ոչ միայն ֆինանսական այլ նաև ինտելեկտուալ և շուկայական կապերի ռեսուրսը,
- Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ պլանավորվում է շեշտակի ավելացնել նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել արտադրական կարողությունների զարգացումը,
- Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, քաղաքացիների կյանքի որակի բարձրացման և պետական մարմինների հետ առնչվելու դյուրացման, ինչպես նաև միջազգային տնտեսական գործընթացներին արդյունավետ մասնակցելու նպատակով, Հայաստանում նախատեսվում է զանգվածաբար կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաներ: Զուգահեռաբար նախատեսվում է բարձրացնել կիբեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում:

Ոլորտի հիմնական թիրախներն են.

- Տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ կայուն աճի շարժիչ ուժը պետք է հանդիսանա նորարարությունը և առաջադեմ տեխնոլոգիաների ստեղծումն ու կիրառումը: Միաժամանակ Հայաստանի զարգացման հենասյունը կրթված, ստեղծագործ և ազատ քաղաքացին է, ուստի գիտելիքահենք տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է խրախուսել նորարարությունը և նախաձեռնողականությունը,
- Ապահովել տեխնոլոգիական ընկերությունների կողմից ստեղծված բարձրորակ կրթական ծրագրերի լայն կիրառումը ԲՈՒՀ-երում ինչպես նաև Հայաստանի տարբեր քաղաքներում գտնվող տեխնոլոգիական կենտրոններում և կրթական այլ հաստատություններում,
- Խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործման և ներդրողների ներգրավման միջոցով,

- Ստարտափ էկոհամակարգի զարգացման և միջազգային շուկաներում հայկական ընկերությունների առաջխաղացման և ամրապնդման նպատակով օժանդակել ընկերություններին մասնակցել միջազգային հայտնի աքսելերացիոն կազմակերպությունների ուսուցողական ծրագրերին,
- Աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային G2G(կառավարություն-կառավարության) և B2B (բիզնես-բիզնես) համագործակցության պլատֆորմների զարգացմանը,
- ՀՀ մարզերի համահարթ զարգացման նպատակով խթանել մարզերում ժամանակակից հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեությունը, և ձեռնարկել միջոցներ Հանրապետության տարածքում նոր կենտրոնների ստեղծման ուղղությամբ,
- Նպաստավոր պայմաններ ստեղծել միջազգային բարձր տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան մուտքի համար՝ գիտահետազոտական, արտադրական և կրթական կենտրոններ հիմնելու նպատակով,
- Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ պլանավորվում է շեշտակի ավելացնել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել Հայաստանում արտադրական կարողությունների զարգացումը՝ աստիճանաբար նվազեցնելով բանակի կախվածությունը ռազմական տեխնիկայի ներկրումներից, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ բարձրացնելով ռազմական միավորների և համակարգերի արդյունավետությունը:

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Աղյուսակ 6. Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը

- **Ռազմարդյունաբերության ոլորտում**. ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ նախատեսվում է 5.2 մլրդ դրամ հատկացնել **«Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում» ծ**րագրին՝ *«Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ»* միջոցառման իրականացման նպատակով: 2022թ. նախատեսվում է՝
  - ✓ Նոր նմուշների մշակում
  - ✓ Նոր և արդիականացված նմուշների փորձնական խմբաքանակների արտադրություն
  - ✓ սպառազինության և ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի արդիականացում:
- **Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում.** 2022թ նախատեսվում է իրականացնել շուրջ 12.0 մլրդ. դրամ արժեքով Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիրը, որի նպատակն է՝
  - ✓ Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,
  - ✓ Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը և այլն,

- ✓ Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ֆորմատներում շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ
- ✓ Զանգվածաբար կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաներ: Զուգահեռաբար նախատեսվում է բարձրացնել կիբեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում:

- Պետական կառավարման թվայնացումը նախատեսվում է իրականացնել ինստիտուցիոնալ մոտեցումով, ըստ որի ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը կհանդիսանա թվայնացման գծով մասնագիտացված կառույց: Կառավարման թվայնացման գործընթացները համակարգելու նպատակով 2022թ, նախատեսվում է իրականացնել 4 միջոցառում, որի նպատակն է.
  - ✓ Էլեկտրոնային ծառայությունների օգտագործելիության մակարդակը բարձրացում և պետական թվային ծառայությունների օգտվելու գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպում: Էլեկտրոնային ստորագրության անխափան աշխատանք և քաղաքացիների շրջանում օգտագործելիության աճ: Պետական և մասնավոր հատվածի պայմանագրերի կեղծման բացառում:
  - ✓ Ունենալ ամբողջությամբ թվայնացված փաստաթղթաշրջանառություն՝ նախագծերի կառավարման համակարգը կարող է ստեղծել փաստաթղթեր, որոնք ենթակա են պաշտոնական ստորագրման/կնքման, ուղարկման այլ մարմիններ, արխիվացման և այլն: Փաստաթղթաշրջանառության ենթահամակարգն, իր հերթին, կստեղծի առաջադրանքներ և ծրագրեր նախագծերի կառավարման ենթահամակարգում, կուղարկի հաղորդագրություններ և այլն:
  - ✓ Միասնական հենքի ստեղծում, որը թույլ կտա մի շարք ընդհանուր տրամաբանական լուծումներ միավորել մեկ գրադարանի մեջ և հետագայում նման լուծումների անհրաժեշտության պարագայում կիրառել՝ խուսափելով նույն գործառույթի բազմակի և բազմազան իրականացումներից: Միասնական հենքի օգտագործումը թույլ կտա նաև հեշտացնել առկա համակարգերի սպասարկումը՝ նվազեցնելով լուծումների քանակը և բազմազանությունը: Այն հնարավորություն կտա հավաքագրել ընդհանրական լուծումները և ունենալ միասնական պետական թվային ճարտարապետության:
  - ✓ Կիրառելով միջազգային փորձը ունենալ ՀՀ պետական թվային համալիր համակարգի միասնական ճարտարապետության մոդել, որը կկատարելագործվի տեխնոլոգիական փոփոխությունների հետ մեկտեղ: Քաղաքացիների համար ՀՀ պետական թվային համակարգերը դարձնել ավելի հասանելի և պարզ կիրառման համար: Բարձրացնել պետական թվային համակարգերի նկատմամբ վստահությունը քաղաքացիների շրջանում:

- **Հեռահաղորդակցության ապահովում.** ծրագրի նպատակն է ապահովել ՀՀ հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը: ՀՀ ողջ տարածքում թվային հեռուստահեռարձակման ապահովման նպատակով արբանյակային ունակության վարձակալությունը նախատեսված է օպտիկա-մանրաթելային ցանցին դժվար հասանելի, ինչպես նաև բարձր լեռնային ու սահմանամերձ բնակավայրերում տեղակայված թվային ցանցի թվով 147 հեռուստակայաններում ազդանշանի հեռահաղորդման համար: Բացի այդ, արբանյակային կապուղին ծառայում է նաև որպես պահուստ՝ թվով 66 հիմնական հեռուստակայաններում օպտիկա-մանրաթելային համակարգի հնարավոր խափանումների դեպքում:
- 2022 թվականից կիրագործվեն ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիտորինգի համակարգի ներդրման 8.2 մլրդ. ՀՀ դրամ արժողությամբ ծրագրի 1-ին փուլով նախատեսված միջոցառումները: Բացի այդ, ԵՄ աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի

շրջանակներում Հայաստանի ներքին և արտաքին լայնաշերտ ցանցի կառուցման և ներդման համար կհատկացվի 700.0 մլն դրամ:

Աղյուսակ 7. Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը

	Ծրագրի անվանումը	2022թ., մլն դրամ	2021թ., մլն դրամ	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ, %	2022/2021թ., մլն.դրամ	2022/2021թ., %	կշիռը ընդամենը ոլորտի հատկացումների աճում, տոկոս
	Ընդամենը՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	**21,069.6**	**9,123.6**	**100.0**	**11,946.0**	**56.7**	**100.0**
1	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիր	12,266.4	2,989.7	58.2	9,276.7	75.6	77.7
2	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,107.3	1,125.6	5.3	-18.3	-1.7	-0.2
3	Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ	5,233.9	4,574.2	24.8	659.7	12.6	5.5
4	Հեռահաղորդակցության ապահովում	2,461.9	434.0	11.7	2,027.9	82.4	17.0

Գծապատկեր 34. Ոլորտին ուղղվող ծախսերի համեմատականը 2022-2021թթ. (մլն.դրամ)



ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տարածքային կառավարման քաղաքականության ոլորտում կարևորվում են՝

Հանրապետության տարածքային համաչափ զարգացումը և մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմումը, տնտեսական ակտիվության և աճի ապահովումը,

Վարչատարածքային բարեփոխումների ապահովումը և համայնքների խոշորացման ծրագրերի իրականացումը, համայնքային ծառայության համակարգի զարգացումը,

Համայնքային ենթակառուցվածքների գնահատումը և զարգացումը:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Քաղաքային փողոցների լուսավորման միջին օրական տևողությունը 7.42 ժամից կաճի մինչև 12 ժամ, Տեղադրված լուսավորության արդյունավետությունը (կառուցվածքը) կկազմի 75 %
- ՄԱԿ-ի երկրաշարժի ուժգնության սանդղակի 9 (IX) նշանագծի սեյսմակայունության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների կշիռը 13.4 %-ից կաճի և մինչև 2024թ. կկազմի 18.7%, Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում վերապատրաստված աշխատակազմը 30%-ից կաճի և 2022թ. կկազմի 66%:
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հանրապետական ցուցանիշի 70 տոկոսը չգերազանցող մեկ շնչի հաշվով ՀՆԱ ունեցող մարզերի բնակչությունը, ընդամենը բնակչության մեջ կկազմի 30%:





ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կշարունակվեն Երևանի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքները, որի իրականացման համար Երևանի քաղաքապետարանին կտրամադրվի 1,500.0 մլն դրամ

պետական աջակցություն: Արտաքին լուսավորությանմբ ապահովված փողոցների երկարությունը կկազմի 1,691.3 կմ:

Կշարունակվեն նաև Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, արդյունքում արտաքին լուսավորության էլեկտրաէներգիայի սպառման ծավալը կկրճատվի 50 տոկոսով: Այս նպատակով իրականացվող 3 միջոցառումների շրջանակներում կհատկացվի 1,645.0 մլն դրամ:

Կվերանորոգված փողոցների և բակերի տեսակարար կշիռը Երևանի փողոցների և բակերի ընդհանուր թվում կհասնի 95 տոկոսի: Կշարունակվեն Երևան քաղաքի փողոցների և մայթերի, բակային և միջբակային տարածքների ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Տարեվերջում կունենանք վերանորոգված թվով 550, իսկ ճաքալցված 120 փողոցներ: Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար կտրամադրվի 3,284.0 մլն դրամ:

Նախատեսվում է ավարտել Արգավանդ - Շիրակ 2.7 կմ երկարությամբ /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ և Բաբաջանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ ճանապարհահատվածների կառուցման աշխատանքները, որի համար կհատկացվի 4,439.8 մլն դրամ:

Երևանի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն Երևան քաղաքի մանկապարտեզների էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման ուղղությամբ: Հիմնանորոգման, սեյսմիկ ամրացման և էներգաարդյունավետության միջոցառումներ կիրականացվեն Երևանի ենթակայության 30 մանկապարտեզներում, ևս 140 մանկապարտեզում կիրականացվեն էներգաարդյունավետության միջոցառումներ ևր կծախսվի 415.0 մլն դրամ:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ: Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորմանը կուղղվի 628.3 մլն դրամ: Վերգետնյա տրանսպորտով ուղևորափոխադրումները կկազմեն 4,210.0 հազար ուղևոր, որից 840.0 հազարը կկազմեն արտոնություններից օգտվողները (անվճար ուղևորափոխադրումները):

Երևանի մետրոպոլիտեն: Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով Երևանի քաղաքապետարանին նախատեսվում է հատկացնել 2,866.5 մլն դրամ: Երևանի ենթակառուցվածքների նորոգմանը կուղղվի 500.0 մլն դրամ: Մետրոպոլիտենի ուղևորափոխադրումները 2022 թվականին կկազմեն 18.7 մլն, որից 1.4 մլն կկազմեն արտոնություններից օգտվող (անվճար) ուղևորափոխադրումները:

Գյումրու փողոցների կառուցում և լուսավորություն: Գյումրու ընտրված փողոցների (ներառյալ հետիոտնային անցումների ցանցը և ջրահեռացման համակարգը) վերակառուցմանը կուղղվի 1,148.1 մլն դրամ, իսկ Գյումրու փողոցային լուսավորության արդիականացմանը կուղղվի 879.3 մլն դրամ, որոնց իրականացման համար նախատեսված նախագծա-նախահաշվային աշխատանքներին կուղղվի 341.5 մլն դրամ: Այս երեք միջոցառումների իրականացման արդյունքում 2022 թվականին կհիմնանորոգվի 9 փողոց, կներդրվի քաղաքի փողոցների լուսավորության համակարգի ավտոմատ կառավարման համակարգ, որի արդյունքում փողոցների էլեկտրաէներգիայի ծախսը միջինում կկրճատվի մոտ 30 տոկոսով: **Տարածքային զարգացման ծրագրերի հիմնական գործընկերներն են** ՀԲ-ն, ԱԶԲ, ԱՄՆ ՄԶԳ-ն, ԵՏՐ-ն, ՎԶԵԲ-ը, ԵՄ-ն, ԵՆԲ-ն: 2022 թվականին այս շրջանակներում տարածքային զարգացման ծրագրերին կուղղվեն 37,642.5 մլն դրամ վարկային և դրամաշնորհային միջոցներ հետևյալ ուղղություններով.

- ՀՀ մարզերի և համայնքների տարածքային և տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը,
- Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացմանը,
- Երևանի մետրոպոլիտենի և քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքների վերականգնմանը և բարելավմանը,
- Քաղաքային ենթակառուցվածքների, այդ թվում՝ Արգավանդ-Շիրակ, Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի բարելավմանը,
- Գյումրի քաղաքում հիմնական ճանապարհների վերակառուցմանը և հանրային լուսավորության արդիականացմանը, Երևանում հուսալի լուսավորության ցանցի ստեղծմանը,
- Հայաստանում վարչատարածքային բարեփոխման միջոցով՝ ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարմանը:



Կբարելավվի հանրապետության դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակը. Ընդհանուր առմամբ նախատեսվում է 46 դպրոցների ուժեղացում կամ նորերի կառուցում, որից 2022 թվականին նախատեսված թվով 24 գերակա դպրոցներից 8-ի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել: **Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանը** կուղղվի 5,990.1 մլն դրամ, որից ծրագրի համակարգմանը կուղղվի նախատեսված միջոցներից՝ 104.7 մլն ՀՀ դրամ:

Աջակցություն սահմանամերձ համայնքներին: Սահմանամերձ 23 համայնքների (81 բնակավայրեր) տրամադրվող պետական աջակցությունը կկազմի 1,155.2 մլն դրամ, որով նախատեսվում է բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների անշարժ գույքի հարկի գծով ծախսերի ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցում:

Համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով 502 համայնքների կտրամադրվեն դոտացիաներ: Ֆինանսական համահարթեցման նպատակով համայնքներին տրամադրվող դոտացիաները կկազմեն 64,349.1 մլն դրամ:

Ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ մարզերին նախատեսվում է հատկացնել 18,000.0 մլն դրամ սուբվենցիաներ: Նշված միջոցները կուղղվեն 70 խոշորացված համայնքներում կապիտալ ներդրումներին, որոնք պետք է համապատասխանեն համայնքների զարգացման հնգամյա ծրագրերին և համայնքների տարեկան աշխատանքային պլանին:



ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2022 թվականին կոշտ թափոնների կառավարման բնագավառում կարևորվում են՝

- **ՀՀ բնակավայրերում աղբահանության բարելավման ապահովումը**

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Թափոնների հավաքման ծածկույթը 16%-ից կավելանա և ակնկալվում է, որ մինչև 2024թ. կկազմի 100%:



ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանում փակման ենթակա աղբավայրերի փակում և նոր աղբավայրերի ստեղծում: Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգի բարելավմանը և նոր աղբավայրի ստեղծմանը տարբեր բյուջետային միջոցառումներով 2022թ. կուղղվի 2,156.4 մլն դրամ:

29 հա տարածքում կկառուցվի եվրոպական չափորոշիչներով նոր քաղաքային աղբավայր (կիրականացվի աշխատանքների 60 տոկոսը), կներկայացվեն գործող թվով 2 աղբանոցների (Նուբարաշեն և Աջափնյակ) մեկուսացման վերջնական նախագծերը, և քաղաքային նոր աղբավայրի կառուցման վերջնական նախագիծը, կստեղծվեն աղբահանություն իրականացնող կազմակերպությունների մեքենաների համար աղբի տեղադրման 150 մեքենա/օր հնարավորություններ:

ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կստեղծվի նոր մեկ աղբավայր: Աղբավայրը կստեղծվի Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով: Կառուցապատման աշխատանքները մեկնարկել են: Շահագործվող աղբանոցների թիվը կկրճատվի 30 տոկոսով: Ծրագրին 2022թ. ընդամենը կուղղվեն մոտ 5,228.7 մլն դրամ միջոցներ: Ծրագիրն ընդգրկում է 97 համայնք:

ՎԶԵԲ-ի, ԱԵԷԲՖ (E5P), ԵՄ-ի և ԵՆԲ-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվում են ծրագրեր ուղղված՝

- Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանը, նոր աղբավայրի կառուցմանը,
- Կոտայքի մարզի կոշտ կենցաղային թափոնների վերամշակմանը,
- Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգի բարելավմանը, այդ թվում՝ նոր աղբավայրի կառուցում, շահագործում և վերամշակման ծավալների ավելացմանը նպաստող համակարգերի ներդրում:

2022թ. այս խնդիրներին կուղղվի 4,416,8 մլն դրամ վարկային և 2,968.2 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համայնքային ծառայողների վերապատրաստման կազմակերպումը՝ արդյունքում բարելավելով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի արդյունավետությունը: Ծրագրի իրականացման համար «Վերապատրաստման ծառայություններ» միջոցառման գծով 2022 թվականին կհատկացվի 18.5 մլն դրամ:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է քաղաքացիական պարտքի կատարման այլընտրանքային տարբերակների ապահովումը, որի շրջանակում «Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ նախատեսվում է ՀՀ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած 126 ՀՀ քաղաքացիաներին փոխհատուցման տրամադրելու համար 2022 թվականին հատկացնել 33.0 մլն դրամ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ճանապարհային քաղաքականության բնագավառում 2022թ. սահմանվում են հետևյալ առաջնահերթությունները՝

- **Միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի շարունակական բարձրացում,**
- **Ճանապարհային կահավորանքի բարելավում,**



- Ճանապարհային անվտանգության պահանջները միջազգային նորմերին համապատասխանեցում,
- «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակություն:

Երկաթուղու բնագավառում առաջնահերթություններն են՝

- Երկաթուղային ենթակառուցվածքի և երկաթուղային ցանցի հիմնանորոգումը, վերակառուցումը և արդիականացումը,
- Երկաթուղային շարժակազմի նորացումը:

Ավիացիայի բնագավառում կարևորվում են՝

- Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցումը եվրոպական և միջազգային ստանդարտներին,
- Հավասար մրցակցային պայմանների ապահովումը ՀՀ-ից և դեպի ՀՀ օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

68%

- **Համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշը[1] 65.92-ից կաճի 68%-ի**:

65. 9%

- **Միջպետական և հանրապետակա անհարթության IRI գործակիցները[2] չեն փոխվի և կկազմեն համապատասխանաբար 6.3 և 7.6 մ/կմ:**
- **Համաձայնեցված ծավալներով երկաթուղային երթուղիների թիվը կմնա հաստատուն՝ թվով 9 երթուղի**:

---

1 Ճանապարհների ծածկի անհարթության միջինացված գործակից:

2 Հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզկենտրոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժին:

Երկաթուղային ցանցի զարգացման շրջանակներում համաձայնեցված երկաթուղային երթուղիներով ուղևորափոխադրումների ապահովմանն նպատակով 423,0 մլն դրամով կփոխհատուցվի «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ուղևորափոխադրումներից ստացված վնասը:

Ճանապարհային ցանցի բարելավումներին և երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի նորոգում, հիմնանորոգում և որակի շարունակական բարձրացում, որի շնորհիվ կունենանք շուրջ 500 կմ վերանորոգված ավտոճանապարհներ: 2022թ. նախատեսվում է հատկացնել 2021թ. համեմատությամբ մոտ 2 անգամ ավել միջոցներ՝ 113,264.8 մլն դրամ, որից.

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառումներով 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 47,101.0 մլն դրամ՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով հաստատված 33,039.2 մլն դրամի դիմաց:

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների բարելավման և անվտանգ երթևեկության ծառայություններ» և «Մարզային նշանակության ավտոճանապարհների բարելավման և անվտանգ երթևեկության ծառայություններ» միջոցառումներով 4163 կմ ամառային պահպանման և 5221 կմ ձմեռային պահպանման, 80 կմ պարբերական պահպանման (միջին նորոգման), 720.6 կմ մետաղական արգելափակոցների պահպանման և վերականգնման, ինչպես նաև երեք թունելների և հինգ կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքների համար 2022 թվականին նախատեսվում է հատկացնել 12,907.0 մլն դրամ (կամ նախորդ տարվա համեմատ 518.8 մլն դրամով ավել):

Վարկային և դրամաշնորհային միջոցներով կշարունակվեն հիմնանորոգվել և կառուցվել հանրապետության ճանապարհները և ճանապարհային ենթակառուցվածքները: Մասնավորապես ԱԶԲ-ի, ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի, ԵՎԶԲ-ի և ԵՄ-ի ֆինանսական աջակցությամբ 2022թ.-ին կիրականացվեն 51,031.5 մլն դրամի վարկային և 2,004.3 մլն դրամի դրամաշնորհային ծրագրեր հետևյալ ուղղություններով.

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցում,
- Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահմանի 51.74 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհի հիմնանորոգում և վերակառուցում,
- Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում՝ շուրջ 68.7 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգում,
- Բագրատաշեն սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամուրջի կառուցում,
- ՀՀ հարավային հատվածի միջհամայնքային ճանապարհների, ենթակառուցվածքների վերականգնում և այլ:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2022թ. խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններն են՝

- ***Ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը,***
- ***Ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,***
- ***Համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը:***

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Ոռոգման ջրի կորուստը կկրճատվի 56.15%-ից մինչև 55%,
- Փաստացի ոռոգվող հողատարածքների մակերեսի կշիռը ոռոգելի հողատարածքների մակերեսում կաճի 53%-ից մինչև 57%,
- Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը 120-150 մլն խ.մ կաճի և կկազմի մինչև 260 մլն խ.մ,
- Խմելու ջրի մշտապես հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը կաճի 97.9%-ից 98.5% (2024թ.),
- Կոյուղու հասանելություն ունեցող բնակչության մասնաբաժինը կաճի 69.7%-ից 69.8% (2024թ.),
- Ջրի կորուստները ջրամատակարարման համակարգում կկրճատվեն 76.5%-ից 70% (2024թ.):

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին կտրամադրվի պետական աջակցություն՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով՝ 1,089.3 մլն դրամ: Ոռոգման սուբսիդավորում կիրականացվի նաև ՋՕԸ-ների համար սահմանված ոռոգման ջրի սակագնի և և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով՝ 4,651,8 մլն դրամ:
- ✓ Ոռոգման համակարգերի հիմնանորոգման համար կհատկացվի 591.2 մլն դրամ: Կշարունակվեն ջրանցքների բաժանարար կետերը SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներով կահավորման աշխատանքները, միջոցառմանը կհատկացվի 929.8 մլն դրամ՝ 715 ջրաչափական սարքավորումներ տեղադրելու համար: Կվերականգնվեն 4 խորքային հորեր՝ կհատկացվի 49.5 մլն դրամ: Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքների համար կհատկացվի 923.5 մլն դրամ, Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման աշխատանքների համար կհատկացվի 900.0 մլն դրամ:

31 օրվա կարգավորման ջրավազանների և 15 փոքր և միջին ջրամբարների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար կհատկացվեն համապատասխանաբար՝ 493.0 մլն դրամ և 2,000.0 մլն դրամ: Մեծավանի, Արփի լճի, Մարմարիկի, Ապարանի և Ազատի ջրամբարների վերականգնման և վերազինման, ինչպես նաև, Տավուշի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար կհատկացվի 1,276.7 մլն դրամ:

Ոռոգման ոլորտում հիմնական գործընկերներ/դոնորներն են՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկը, Եվրասիական զարգացման բանկը, Ֆրանսիայի կառավարությունը, Զարգացման ֆրանսիական գործակալությունը, Եվրոպական միությունը:



2022թ. վարկային և դրամաշնորհային աջակցությունը կկազմի համապատասանաբար՝ 16,690.3 մլն դրամ և 185.7 մլն դրամ, որի շրջանակներում կիրականացվեն ոռոգման համակարգերի կառուցման, բարելավման և արդիականցման մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- Վեդու ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում,
- Ոռոգման համակարգի ռազմավարության մշակման, ոռոգման համակարգի գույքագրման և վերագնահատման, ներդրումային կարիքների գնահատման, ջրի կորուստների կառավարման և այլ գործառույթներ,
- Ոռոգման ցանցերի հիմնանորոգում և կառուցում,
- Ախուրյան գետի վրա, գյուղատնտեսական նպատակներով արդյունավետ ոռոգման համակարգի ստեղծում,
- Ջրաձոր գյուղի վերաբնակեցման (Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագրի շրջանակներում) համար խորհրդատվական և կառավարման ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքների և բնակելի տների կառուցում:
  - ✓ Արփա-Սևան թունելի ընթացիկ շահագործման և պահպանման, Արփա-Սևան թունելի առանձին վթարային հատվածների վերականգնման աշխատանքների համար կհատկացվի 1,715.1 մլն դրամ,
  - ✓ Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանման և շահագործման համար կհատկացվի 290.8 մլն դրամ:



Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման և զարգացման ծրագրեր են իրականացվում Եվրոպական ներդրումային բանկի, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցության շրջանակներում:

Կիրականացվեն հետևյալ ծրագրերը՝

- Երևան քաղաքի ջրամատակարարման ցանցի վերակառուցման և ջրահեռացման համակարգերի բարելավում
- քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման 6 համակարգերի հրատապ վերականգնման աշխատանքներ, ինչպես նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքներ
- Ջրամատակարար ընկերությունների կողմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում, կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում, ինչը թույլ կտա Արմավիր, Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայանքի կեղտաջրերի մաքրման աշխատանքներ իրականացնել

2022թ. այս ծրագրերին ուղղվող վարկային և դրամաշնորհային միջոցները համապատասխանաբար :կկազմեն 8,716.1 մլն.և 2,708.7 մլն. դրամ

- Պարտադիր կապիտալ աշխատանքների շրջանակներում նախատեսվում է կառուցել 2 քլորակայան՝ Սառնակունք գյուղի մոտ և Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում, ,կհատկացվի 182.6 մլն դրամ
- ՀՀ տարածքում վարձակալի կողմից չսպասարկվող համայնքներում ջրամատակարարման ապահովման համար նախատեսվում է ձեռք բերել նախագծանախահաշվային փաստաթղթերը և ,մեկնարկել շինարարական աշխատանքներ՝ 195.0 մլն դրամի շրջանակներում
- ԵՄ աջակցությամբ նախատեսվում է վարկային ծրագրի շրջանակներում 80 բնակավայրերում կառուցել խմելու ջրի մատակարարման համակարգեր՝ ներքին ցանց, ջրամաքրման կայաններ, :խողովակաշարեր՝ 871.0 մլն դրամի շրջանակներում

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ



Էներգետիկայի բնագավառի զարգացման ուղղություններն են՝

- ***Սեփական վերականգնվող էներգապաշարների պոտենցիալի իրացումը,***
- ***Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծումը և արտահանման կողմնորոշում ունեցող էներգահամակարգի կառուցումը,***
- ***Ատոմային էներգետիկայի զարգացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:***

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- **Էլեկտրահաղորդման օդային գծի տարեկան անջատումների քանակը կկրճատվի 14-ից մինչև 2 դեպք,**
- **Ենթակայանների սարքավորումների խափանումների տարեկան քանակը կկրճատվի 33- ից մինչև 6 դեպք,**
- **Կկրճատվի անջատումների միջին տարեկան հաճախականության հոսանքազրկումների քանակ/բաժանորդների թիվ հարաբերակցությունը՝ 0.31-ից մինչև 0.14,**
- **Վերակառուցվող հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի կողմից էներգահամակարգին մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալը 2400-ից կաճի մինչև առնվազն 2800 մլն ԿՎտ/ժ (2023թ.):**

ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Էներգետիկայում երեք խոշոր գործընթերների (ՎՋՄԲ, ԳՋՎ, ԱՋԲ) վարկային և դրամաշնորհային աջակցության, ինչպես նաև ներքին վարկի շրջանակներում կշարունակեն իրականացվել էլեկտրոմատակարարման հուսալիության բարձրացման, էլեկտրահաղորդման ցանցի բարելավման մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝

- «Զարենցավան-3», «Վանաձոր-1», «Աշնակ», ենթակայանների վերակառուցում, 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող «Զովունի» և «Արարատ-2» ենթակայանների վերակառուցում,
- Կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնում,
- ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման, անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքներ:

2022թ. այս ծրագրերին ուղղվող վարկային և դրամաշնորհային միջոցները համապատասխանաբար կկազմեն 47,306.3 մլն դրամ և 444.2 մլն դրամ:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի հիմնական ռազմավարական ուղղություններն են՝

- Բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովումը,
- Շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացվող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է «Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում» ծրագրին հատկացնել 319.9 մլն. դրամ՝ ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության ստանդարտներին և ՀՀ Եվրամիության դիրեկտիվներին, ինչպես նաև ոլորտի անվտանգության նորմերի և կանոնների, լիցենզիայի պայմանների և պահանջների համապատասխանության թվով 45 տեսչական ստուգումների, Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում թվով 739 լիցենզիաների տրամադրման առաջնահերթությունների ապահովման նպատակով:

Գծապատկեր 35. Ենթակառուցվածքների զարգացման պետական ծրագրերը



2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ Է.

- ագրարային հատվածի արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը,
- ագրոպարենային արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանմանը,
- գյուղատնտեսական արտադրանքի արժեշղթաների զարգացմանը,
- պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը,
- կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանը:

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

1. հողային բարեփոխում,
2. արտահանման դիվերսիֆիկացում,
3. առևտրայնացում և ավելացված արժեք,
4. տեխնոլոգիական արդիականացում և նորարարություն,
5. մարդկային կարողությունների և հմտությունների զարգացում,
6. գյուղական զարգացում,
7. ինստիտուցիոնալ կարողություններ:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

- ✓ բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը և արդյունավետությունը,
- ✓ ապահովել սննդամթերքի անվտանգությունը,
- ✓ բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը,
- ✓ զարգացնել տեղական շուկաները և ավելացնել արտահանման հնարավորությունները,
- ✓ զարգացնել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները գյուղատնտեսության ոլորտում,
- ✓ աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը,
- ✓ խթանել թվային գյուղատնտեսությունը և տեխնոլոգիական նորարարությունները:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ➢ 2021 թվականի նկատմամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճ՝ 15 %-ով:
- ➢ Օգտագործվող վարելահողերի ավելացում՝ 50%-ի փոխարեն կօգտագործվի 65 %–ը:
- ➢ Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում մինչև 2821 միավոր:
- ➢ Պտուղբանջարեղենի և խաղողի վերամշակումից ստացված արտադրանքի ծավալների աճ 5%-ով:
- ➢ Յուրաքանչյուր տարվա ընթացքում ինտենսիվ այգիների՝ 1000 հեկտարով ավելացում:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Շարունակվում է տնտեսավարողների մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի աստիճանաբար նորացումը: Գյուղատնտեսության ոլորտում ծրագրի մեկնարկից մինչ այսօր ձեռք է բերվել 1800 միավոր նոր գյուղատնտեսական տեխնիկա, 2022 թվականին գյուղատնտեսական տեխնիկայի նորացմանն ուղղված պետական աջակցությանը կուղղվի 524.7 մլն դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ևս 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որի արդյունքում էլ գյուղատնտեսական հողատարածքներն արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմաններ կստեղծվեն:



ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական կենսունակ համակարգի ներդրումը երկրի տնտեսության ագրարային հատվածի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է: ՀՀ մարզերի տարածաշրջաններում կշարունակվեն ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի, սալորի այգիների և աշնանացան ու գարնանացան ցորենի, գարու և վարսակի, կարտոֆիլի ցանքատարածությունների ապահովագրման պետական աջակցությունը կարկուտ և հրդեհ, գարնանային ցրտահարություն ռիսկերից: Միջոցառման շրջանակում 2022 թվականին նախատեսվում է ապահովագրել մինչև 6500 հա տարածք, իսկ ծրագրի մեկնարկից սկսած ապահովագրվել է շուրջ 8196 հա: Միջոցառմանն ուղղվող ֆինանսական միջոցները կկազմեն 308 մլն դրամ:

Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի օգոստոս ամսից: Ծրագրի հիմնական նպատակը հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է: Ծրագրի մեկնարկից սկսած մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը հաստատվել է 298 շահառուի 65319.5 մլն դրամի չափով վարկ, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 45270 հատ բերքի գնման պայմանագիր, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 3924.4 մլն դրամ: 2022 թվականին նախատեսվում է սուբսիդավորել ևս 50 շահառուի տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Միջոցառմանն ուղղվող ֆինանսական միջոցները կկազմեն 2,300.0 մլն դրամ:

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը մեկնարկել է 2018 թվականի հուլիս ամսից: Ծրագրի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է: Ծրագրի մեկնարկից սկսած մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը հաստատվել է 394 շահառուի 17551.9 մլն դրամի չափով լիզինգ, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 1400 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 1234.1 մլն դրամ: 2022 թվականին նախատեսվում է սուբսիդավորել ևս 40 շահառուի տրամադրվող լիզինգների տոկոսադրույքները: Միջոցառմանն ուղղվող ֆինանսական միջոցները կկազմեն 1,146.6 մլն դրամ:

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորմանը նախատեսվում է հատկացնել 1.084.8 մլն դրամ՝ հողատարածքի ընդհանուր քանակը հասցնելով 986,7 հա: Կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման գծով նախատեսվում է հատկացնել 462.5 մլն դրամ՝ 85 հա ինտենսիվ պտղատու այգի հիմնելու համար: Ծրագրի հիմնական նպատակը՝ մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով ինտենսիվ խաղողի, պտղատու և հատապտղատու այգետնկումների խթանմամբ հանրապետությունում խաղողագործության և պտղաբուծության զարգացումը, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը: ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2018թ. մինչև 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ մարզերում և Երևան քաղաքում հիմնվել են 1122 հա ինտենսիվ պտղատու այգիներ և հատապտղանոցներ: ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 3-ի N927-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է հիմնել 363 հա ինտենսիվ պտղատու այգիներ: Այս նպատակով նախատեսվում է հատկացնել 1,200.0 մլն դրամ:

Խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը, հայկական գինու ճանաչելիության բարձրացմանը գինեգործական արտադրանքի որակի բարելավմանը, վաճառքի ծավալների ընդլայնման և արտահանման ծավալների ավելացմանը կուղղվի 237.7 մլն դրամ: Կազմակերպվելու են հայկական գինեգործության հանրահռչակմանը, հայկական գինիների առաջմղմանն ու արտահանմանն ուղղված 11 միջոցառում: Ցուցահանդեսներին, համտեսներին, փորձի փոխանակումներին, պրոմո և այլ միջոցառումներին մասնակցող գինու գործարանների քանակը կազմելու է 26: Նախատեսվում է խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում:

2022 թվականին ևս կշարունակվի կարկտապաշտպան ցանցերի ներդրումը: Ծրագրով նախատեսվում է մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ, գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի տեղադրում, որը կհանգեցնի պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությանը, տնտեսավարողների եկամուտների պահպանմանը ու այգեգործության արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում 2018թ. մինչև 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում տեղադրվել են 107.5 հա վրա կարկտապաշտպան ցանցեր: Միջոցառմանն ուղղվող ֆինանսական միջոցները կկազմեն 20.9 մլն դրամ:

2022 թվականին ևս կառավարությունն շարունակելու է աջակցել ջերմոցային տնտեսությունների ներդրմանը: Փոքր և միջին ջերմոցային տնտեսությունների ներդրման պետական աջակցությանը նախատեսվում է հատկացնել 400.0 մլն դրամ: Ծրագրի հիմնական նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրանքի արտադրության ծավալները, բարձրացնել արտադրված արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել ևս 30 հատ ջերմոցային տնտեսություն: 2021 թվականին 8 շահառուի տրամադրվել է 227.3 մլն դրամի փոխհատուցում:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման աջակցության ծրագրերի իրականացման նպատակը գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է, որի շրջանակում կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման համար պետական աջակցություն է ցուցաբերվում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով: Ոռոգման արդիական համակարգերի ներդրման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը նախատեսվում է հատկացնել 72.9 մլն. դրամ՝ ոռոգման հողատարածքների քանակը հասցնելով 965 հա: Փոխհատուցման բաղադրիչով աջակցությունը կկազմի 13 մլն. դրամ՝ ոռոգման հողատարածքների քանակը հասցնելով 35

հա: «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագրով նոյեմբերի 30-ի դրությամբ 10 շահառուի (12 հայտ) տրամադրվել է 316.9 մլն դրամի վարկ, սուբսիդավորման գումարը կազմել է 68.8 մլն ՀՀ դրամ, 357 հեկտար հողատարածքներում ներդրվել են ոռոգման արդիական համակարգեր: Ծրագրի երկրորդ բաղադրիչով՝ ընդհանուր 2,48 հա հողատարածքում համակարգեր ներդրած 2 քաղաքացու տրամադրվել է 244.7 հազ. ՀՀ դրամ փոխհատուցում, ստացվել է ծրագրի մասնակցության 7 դիմում:

2022 թվականին շարունակական կլինեն անասնապահության խրախուսման նոր նախաձեռնությունները: Տավարաբուծության զարգացմանը նախատեսվում է հատկացնել 74.4 մլն դրամ: Միջոցառման նպատակը տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է: Ծրագիրը նախատեսում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնել տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռք բերման պետական աջակցություն, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել նախիրների տոհմային արժեքը և տավարաբուծությունում վերականգնել տոհմային գործընթացը: Անասնապահության խրախուսման միջոցառումների արդյունքում 2022թ. ձեռք բերվող խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների քանակը նախատեսվում է հասցնել մինչև 1262 գլխի: Մինչև 2024թ. տոհմային կենդանիների տեսակարար կշիռը 0.5-ից կաճի մինչև 5%: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել շուրջ 1262 գլուխ տոհմային ԽԵԿ:

Շարունակական կլինի նաև «Խելացի» անասնաշենքերի կառուցման աջակցությունը: Ծրագիրն ուղղված է անասնապահական տնտեսությունների արդիականացման համար փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, ինչպես նաև դրանց տեխնոլոգիական ապահովման համար պետական աջակցության տրամադրմանը, որը կնպաստի ինչպես պահվածքի պայմանների բարելավմանը, այնպես էլ՝ կաթնատվության մակարդակի բարձրացմանը, ինչն էլ կհանգեցնի արտադրողականության աճին, տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը և ճյուղի շահութաբերության մակարդակի բարձրացմանը: Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցությանը կուղղվի 315.0 մլն. դրամ: Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքների կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում ստացվել է մասնակցության 363 դիմում, կնքվել է 72 պայմանագիր, կառուցվել է 36 անասնաշենք և ընթացքում կկառուցվի ևս 36 անասնաշենք, որից 5-ն ավարտել են առաջին փուլը:

Մատչելի վարկավորման պայմանների կիրառման և ծախսերի փոխհատուցման միջոցով հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ խրախուսվում է տոհմային գործի զարգացումը: ՀՀ-ում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագրի շրջանակում նախատեսվում է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռք բերման մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցությունը իրականացնել 2 եղանակով՝ 1. տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռք բերման նպատակով

տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում, 2. կատարված ծախսի փոխհատուցում: Նախատեսվում ծրագրի երկու բաղադրիչներին հատկացնել համապատասխանաբար 59.3 և 19.4 մլն. դրամ: Նախատեսվում է 2022թ. ձեռք բերվող մանր եղջերավոր տոհմային կենդանիների քանակը հասցնել 910-ի:

2022 թվականին նախատեսվում է իրականացնել խոշոր եղջերավոր կենդանիների համատարած համարակալման և հաշվառման աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար 2022թ-ին նախատեսվում է հատկացնել 884.4 մլն դրամ: Նպատակը՝ հաշվառման և անձնագրավորման համակարգի ներդրումն է, որը կարող է հանդիսանալ կարևոր գործիք անասնաբուծական արտադրանքի կանխատեսման ճշգրտության բարձրացման, կենդանիների տեղաշարժի վերահսկման, թաքնված գլխաքանակի բացահայտման, ապահովագրական մեխանիզմների մշակման համար:

Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով շարունակվում են գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը: Սույն ծրագիրը հնարավորություն կընձեռի ընդլայնել գյուղացիական տնտեսությունների կարողությունները, բարձրացնել ոլորտի մրցունակությունը, նպաստել համայնքների ամրապնդմանը, բարելավել գյուղական բնակչության կենսապայմաններն ու կյանքի որակը, բարձրացնել երկրի պարենային անվտանգության մակարդակը: Ծրագրի մեկնարկից սկսած տրամադրվել է շուրջ 170,0 մլրդ դրամի՝ 74400 միավոր վարկ: 2022 թվականին վարկերի մատչելիության բարձրացմանը կուղղվի 9,800.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է մասնակի սուբսիդավորել 2022 թվականին 7000 շահառուներին՝ մատչելի պայմաններով տրամդրվելիք վարկերի տոկոսադրույքները, ինչպես նաև շարունակական սուբսիդավորել նախորդ տարիներին 59704 շահառուներին տրամադրված վարկերը:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի գծով 2022 թվականին նախատեսվել է հատկացնել 2,198.9 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել ՀՀ էկոնոմիկային նախարարության գործընթացներում ներառված փաստերի վրա հիմնված քաղաքականության ընթացակարգերը, բարելավել արոտավայրերի և անասնապահական համակարգերի կառավարման արդյունավետությունը, ձեռք բերել 30 գյուղտեխնիկա, կառուցել 7 կմ ջրագիծ, 9 խմոց, 13 փարախներ, 2 անասանբուժական կենտրոններ, 12000 հա ջրարբիացնող արոտավայրեր, ինչպես նաև նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում ներդնել ժամանակակից ոռոգման համակարգեր:

Ենթակառուցվածքների և գյուղական ֆինասավորման աջակցություն ծրագրի գծով 2022 թվականաին նախատեսվել է հատկացնել 1,320.3 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բարելավել գյուղական ազգաբնակչության տնտեսական ու սոցիալական կարգավիճակը և ստեղծել զբաղվածության ապահովման կայուն մեխանիզմներ՝ զարգացնելով արտադրական համակարգերը և կապը ապրանքային

մշակաբույսերի արտադրության արժեշղթային օղակների հետ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել 80 գյուղացիական տնտեսվարողների, Գեղարքունիքի մարզի Վարդենիկ և Շիրակի մարզի Հոռոմ համայնքներում կառուցել սառնարանային տնտեսություններ, 4 համայնքներում իրականացնել ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում, իրականացնել համայնքային հողերի էրոզիայի կանխարգելում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև տրամադրել վարկեր 35 փոքր գյուղացիական տնտեսվարողներին:

ԵՄ աջակցությամբ նախատեսվում է ձեռք բերել գինեգործական և խաղողա գործական արտադրանքի իզոտոպային բաղադրության փորձաքննության համար անհրաժեշտ մագնիսական ռեզոնատոր «SNIF-NMR» լաբորատոր սարքավորում, ինչպես նաև ստեղծել լոգիստիկ կենտրոն:

Աղյուսակ 8. Ոլորտի/բնագավառի պետական ծրագրերը

Հ/Հ	Ծրագրի անվանումը	2022թ., մլն դրամ	2021թ. մլն դրամ	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ, %	2022/2021թ. մլն.դրամ	2022/2021թ., %	կշիռը ընդամենը ոլորտի հատկացումների աճում, տոկոս
1	2	3	4	5	6	7	8
1	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	12,916.1	6,625.8	51.7	6,290.3	194.9	84.1
2	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	6,093.5	2,603.2	24.4	3,490.3	234.1	46.7
3	Անասնաբուժական ծառայություններ	2,587.3	2,027.6	10.3	559.7	127.6	7.5
4	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	2,199.0	3,930.5	8.8	(1,731.5)	55.9	
5	Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	986.1	1,727.8	3.9	(741.7)	57.1	
6	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	144.3	412.1	0.6	(267.8)	35.0	
7	Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ	70.5	190.8	0.3	(120.3)	36.9	

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

Ոլորտային ծախսային գերակայություններն են՝



ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ոլորտում միջոցառումների. պետական բյուջեներից պահպանվող պարտավորությունների կատարման մակարդակը 91.1%-ից կհասնի 100%-ի (թիրախը՝ 2024 թ.):*

- *Բնապահպանական ծրագրեր իրականացնող համայնքների մասնաբաժինը ազդակիր համայնքների նկատմամբ կհասնի 80%-ի:*

- *Վնասված անտառային տարածքների մասնաբաժինը ընդհանուր անտառածածկ տարածքներում 3.8%-ից կնվազի մինչև 2.3% (թիրախը՝ 2024 թ.):*

- *Վերականգնված անտառային տարածքները 2022 թվականին կավելանան 130 հեկտարով:*

- *Շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ մշակվող տեղեկատվությունը 70%-ից կհասնի 87%-ի (թիրախը՝ 2024 թ.):*

- *Եղանակային կարճաժամկետ կանխատեսումների ճշգրտության աստիճանը 85%-ից կհասնի 90%-ի (թիրախը՝ 2024 թ.):*

- *Բնագիտական նմուշների հանրայնացման և էկոկրթական նախագծերի քանակը **10**-ից կհասնի **15**-ի (թիրախը՝ **2024 թ.**):*

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՂՂՈՒԹՈՒՆՆԵՐԸ

- **Կմաքրվի Սևանա լճի շրջակայքի 271 հա ջրածածկ անտառտնկարկներ**: Այս միջոցառման իրականացմանը կուղղվի **118.2 մլն դրամ:**

- **Կիրականացվի Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառում:** Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների՝ ձկան և խեցգետնի, պաշարների հաշվառման աշխատանքներին նախատեսվում է հատկացնել **7.6 մլն դրամ:**

- **Տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված վնասների մեղմմանն ուղղված աջակցության ծրագրեր կիրականացվեն ազդակիր ՀՀ 7 համայնքներում:** Այդ նպատակով կհատկացվի **108.2 մլն դրամ:**

- ***Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովում:***
  Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերի, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցների, «Սոսիների պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրերի, դենդրոպարկերի և բնության հատուկ պահպանվող այլ տարածքների պահպանությանը, բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը կհատկացվի **1,159.4 մլն դրամ**:

- **Անտառների պահպանմանը՝ այդ թվում** ապօրինի հատումների, բնափայտի պաշարների, անտառների և անտառային հողերի քանակական ու որակական փոփոխությունների, անտառային հրդեհների, հիվանդությունների և վնասատուների տարածվածության և այլ բացասական գործոնությունների կանխարգելմանը կուղղվի **1,335.5 մլն դրամ:** Անտառպահպանական ծառայություններ կմատուցվեն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող անտառային 342,400 հա տարածքներում:**:**

- **Կվերականգնվի 130 հա անտառային տարածք**: Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներին հատկացումները կկազմեն **413.8 մլն դրամ**:

- **Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրին** կուղղվի **1,004.3 մլն դրամ**:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2022թ., 6,771.7 մլն. դրամ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ,
- Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ,
- Բնապահպանական սուբվենցիաներ համայնքներին,
- Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում
- Անտառների կառավարում
- Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն

Աղյուսակ 9. Ոլորտի/բնագավառի պետական ծրագիր

#	Ծրագրի անվանումը	2022թ., մլն դրամ	2021թ., մլն դրամ	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ, %	2022/2021թ., մլն.դրամ	2022/2021թ., %	կշիռը ընդամենը ոլորտի հատկացումների աճում, տոկոս[4]
1	2	3	4	5	6	7	8
1	Անտառների կառավարում	2,228.4	2,177.4	32.9	51.0	102.34	-
2	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ	1,686.9	1,685.6	24.9	1.30	100.08	-
3	Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում[5]	1,292.2	3,317.7	19.1	(2,025.5)	38.95	-

[4] 2022 թվականի պետական բյուջեով ոլորտին տրամադրվող հատկացումները 2021 թվականի համեմատ գումարային չեն աճել:
[5] 2022թ. ավարտվել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) կողմից տրամադրվող դրամաշնորհային ծրագիրը:

4	Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,111.1	1,164.9	16.4	(53.8)	95.38	-
5	Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն	344.9	344.9	5.1	0	100.00	-
6	Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում	108.2	524.3	1.6	(416.1)	20.64	-

1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականությունը նպատակաուղղված է բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը:

Արտակարգ իրավիճակներին դիմագրավելու համար ոլորտում գործում են Փրկարար ծառայությունը, Պետական ռեզերվների գրասենյակը, Սեյսմիկ պաշտպանության ծառայությունը, Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, և Ռուս հայկական մարդասիրական կենտրոնը:

Նպատակն՝ աղետների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումն է, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված գործառություններն են:

Ոլորտի հիմնական թիրախներն են՝ արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում, արտակարգ իրավիճակների արդյունավետ արձագանքում, արտակարգ իրավիճակների կանխում, հնարավոր հետևանքների նվազեցում և վերացում, քաղաքացիական պաշտպանություն, բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանություն, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքների իրականացում, սեյսմիկ ռիսկերի գնահատում և նվազեցում, արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների և դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցում, ճգնաժամային կառավարման կարողությունների զարգացում, արտակարգ իրավիճակներում ռազմավարական նշանակության պաշարներով ապահովում և այլն, որոնք ներառված էն աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրում:

2022 թվականին արտակարգ իրավիճակներեի բնագավառում նախատեսվում է՝

- Համակարգի տարբեր օղակների կատարելագործում և զարգացում,
- Փրկարար ծառայության կատարելագործում և զարգացում, արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստականության բարձրացում և տեխնիկական հագեցվածության ապահովում, քաղաքացիական պաշտպանության ուժերի կառավարելիության բարձրացում, սահմանամերձ բնակավայրերում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծում և զարգացում:
- Սեյսմիկ պաշտպանության ազգային դիտացանցի արդիականացում և թվայնացում:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Կաճի տեխնածին վթարների և արտադրական պատահարների նվազման տեմպը՝ 50%-ից 60%:



- **Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողություններին** տիրապետող, տեղեկացված և գիտակ բնակչության թվաքանակի աճը կկազմի 10%, նախորդ տարվա 5%-ի փոխարեն:
- Կգնահատվի օբյեկտների 10%-ի **սեյսմակայունության մակարդակը**, նախորդ տարվա 5% ցուցանիշի փոխարեն:



- Արտակարգ դեպքերի և պատահարների **ընդհանուր ահազանգերին արձագանքման մակարդակը** 89%-ից կաճի մինչև 92%:



ԲԱԺԻՆ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փրկարարական ծառայության ոլորտին **կուղղվի** մոտ 0,01%-ով ավելի միջոցներ և կկազմի 11,608.6 մլրդ դրամ:
2021թ. Նախարարությանը՝ որպես նոր նախաձեռնություն, հատկացվել է 48.5 մլն. դրամ «Սողանքային աղետի դեմ պայքար» ծրագրի իրականացման համար:

Նախատեսվում է, որ **ահազանգի ստացման պահից մինչև մեկնումն** ընկած միջին ժամանակահատվածը կկազմի 3 րոպե, նախորդ տարվա 8 րոպեի դիմաց:

Մեկնումի պահից մինչև կանչի վայրն ընկած միջին ժամանակահատվածի նվազեցում 0,6 %-ով նախորդ տարվա համեմատ, ահազանգերին արձագանքման տևողությունը՝ ահազանգի ստացման պահից մինչև կանչի վայրն ընկած միջին ժամանակահատվածը կկազմի մինչև 20 րոպե նախորդ տարվա 24 րոպեի դիմաց Մարտունակության բարձրացման նպատակով իրականացվող ուսումնավարժանքների քանակը կկազմի 325:

Կաճի ՀՀ մասնակցությունը երրորդ երկրների տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելմանը: Կաճի ՌԴ և երրորդ երկրների տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքների մասնակցությունը և արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանը մարդասիրական օգնության ցուցաբերումը: 2022-ին բյուջետային հատկացումները կկազմեն 36,6մլն դրամ:

Արտակարգ իրավիճակների կառավարմանը 2022թ. կուղղվի 1 մլրդ 426,2մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0,32 %-ով կամ 452,4մլն. դրամով, որը պայմանավորված է <<Պահուստ>> և <<Լազուր>> ՊՈԱԿ-ների լուծարմամաբ և ԱԻՆ աշխատակազմին միացմամբ:

Փրկարարական ծառայություններ ծրագրին բաժին է ընկնում արտակարգ իրավիճակների ծրագրերի ֆինանսավորման 81,4%-ը կամ 11մլրդ 557.7մլն դրամ: Այս ցուցանիշը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 0,01 տոկոսային կետով:

Սեյսմիկ պաշտպանության ոլորտին ուղղված ծախսերը աճել են նախորդ տարվա համեմատ 29,8մլն դրամով կամ 0,04 %-ով, որը պայմանավորված է 2022թ բյուջեն 2021թ. տարեսկզբի հաստատավածի նկատմամբ 1,2% աճով:

Արտակարգ իրավիճակների արձագանքելու կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերը աճել են 4,6մլն դրամով կամ 0,04%-ով:

Ռազմավարական նշանակության պաշարների կառավարման և տեխնիկական անվտանգության կանոնակարգմանն ուղղվող ծախսերի մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է 0,04%-ով:

ԲԱԺԻՆ 4. ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Աղյուսակ 10. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող ծրագրերը

Հ/Հ	Ծրագրի անվանումը	2022թ.	2021թ.	Կշիռը ընդամենը ոլորտի բյուջեում, 2022թ, %	Տարբ. 2022/2021թ., մլն.դրամ	2022/2021թ.	Կշիռը ընդամենը ոլորտի հատկացումների աճում, %
		մլն դրամ	մլն դրամ			%	
1	2	3	4	5	6	7	8
1	***Փրկարարական ծառայություններ***	**11,608.6**	**11,501.8**	**81.7**	*106,8*	*0.01*	*18.1*
	այդ թվում						
1.1	*Փրկարարական ծառայություններ*	**11,557.7**	**11,455.0**	**81,4**	*102,7*	*0,01*	*17,4*

1.2	*Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում*	**36.4**	**34.9**	**0,3**	*0,5*		
1.3	*Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում*	**0.9**	**0.8**	**0,01**	*0,1*		
1.4	*Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպում*	**13.6**	**11.0**	**0,1**	*2,6*		
2.	*Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում,խորհրդատվական ծառայությունների ցրամադրում և մոնիտորիգի որոշում*	**1,426.2**	**973.8**	**10.0**	*452.4*	*0.32*	*76.8*
3.	*Սեյսմիկ պաշտպանություն*	**752.9**	**723.1**	**5.3**	*29.8*	*0.04*	*5.1*
4.	*Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում*	**29.9**	**28.8**	**0.2**	*1.1*	*0.04*	*0.2*
5.	*Արտակարգ իրավիճակների արձագանքելու կարողությունների զարգացում*	**114.8**	**110.2**	**0.8**	*4.6*	*0.04*	*0.8*
6.	*Տեխնիկական անվտանգության կանոնակարգում*	**43.4**	**41.7**	**0.3**	*1.7*	*0.04*	*0.3*
7.	*«Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովում*	**230.0**	**237.0**	**1.6**	*-7.0*	*-0.03*	*0.0*
	ԸՆԴԱՄԵՆԸ	**14,205.8**	**13,616.4**	**100,0**	**589.4**		

Գծապատկեր 36. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող ծրագրերի կառուցվածքը



2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ ժ Ծ Ծ ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության առաջնահերթ հիմնախնդիրներն են.

- ***Հանցավորության մակարդակի նվազումը, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի բարձրացումը,***
- ***Ոստիկանության վստահելիության մակարդակի բարձրացումը, համակարգում կոռուպցիայի բացառումը, քաղաքացի-ոստիկան համագործակցության նոր մշակույթի ձևավորումն ու ամրապնդումը,***
- ***ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոնի (ՕԿԿ) ստեղծումը,***
- ***Ոստիկանության գործունեության բնագավառում բռնության դեպքերի նվազեցման և բացառման ուղղությամբ գործուն միջոցառումների իրականացումը,***
- ***ՀՀ ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացումը,***
- ***Ներպետական և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարը մասնավորապես՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման,***

ահաբեկչության և փողերի լվացման դեմ պայքարի ոլորտներում համալիր միջոցառումների իրականացումը,

- *Գործունեության թափանցիկության և հաշվետվողականության պատշաճ մակարդակի ապահովումը:*

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Հանցագործությունների բացահայտման մակարդակը 2022 թվականին կկազմի 62%՝ 2019թ. 58%-ի դիմաց:
- Առավել լատենտային հանցագործությունների (կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության և մարդու թրաֆիկինգի կամ շահագործման դեպքեր) հայտնաբերումը արձանագրված դեպքերի մասնաբաժնում 2022 թվականին կկազմի 8.1%՝ 2019թ. 7.9%-ի դիմաց:
- Ոստիկանության նկատմամբ հասարակական վստահության մակարդակը նախորդ ելակետային ցուցանիշի համեմատությամբ 2022 թվականի կաճի 30%-ով:
- Ծանր հետևանքներով ճանապարհատրանսպորտային պատահարների (3 և ավելի զոհ և/կամ 10 և ավելի վիրավոր) քանակը նախորդ տարվա 0.33% նկատմամբ կնվազի 0.03%-ով:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

- ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող ծրագրերին 2022թ.-ին կուղղվի 66.58 մլրդ. դրամ, որը 2021թ.-ի (64.65 մլրդ. դրամ) նկատմամբ աճել է 3.0 %-ով, կամ 1.93 մլրդ. դրամով:
- Ոստիկանության 2022թ. հատկացումներում ընթացիկ ծախսերը կազմում են 62.1 մլրդ. դրամ կամ 93.3 %-ը (2021թ.-ի՝ 64.34 մլրդ. դրամ նկատմամբ նվազել է 2.24 մլրդ. դրամով կամ 3.5 %-ով), որից՝ միայն աշխատավարձերն ու դրան հավասարեցված վճարումները կազմում են 48.3 մլրդ. դրամ կամ ընդհանուր հատկացումների 72.5 %-ը (2021թ.-ին՝ 48.83 մլրդ. դրամ), կապիտալ ծախսերը՝ 4.48 մլրդ. դրամ կամ 6.7 %-ը (2021թ.-ի՝ 0.31 մլրդ. դրամ նկատմամբ աճը կազմում է 4.17 մլրդ. դրամ): Կապիտալ ծախսերի գծով 2022թ.-ի հատկացումները հիմնականում ուղղվելու են՝ Երևան քաղաքի պարեկային ծառայության և ՕԿԿ-ի շենքերի կապիտալ վերանորոգմանը, Շիրակի ու Լոռու մարզերում պարեկային ծառայության և ՕԿԿ-ի ստեղծման նպատակով շենքերի կապիտալ վերանորոգմանը, ավտոտրանսպորտային միջոցների, սպառազինության և գույքի ձեռքբերմանը:

- Ոստիկանության ընդհանուր հատկացումների 97.66 %-ը կամ 65.02 մլրդ. դրամը բաժին է ընկնում «Ոստիկանության ոլորտների՝ կազմակերպահրավական գործունեության, ծառայությունների մատուցման, հասարակական անվտանգության ապահովման և իրավախախտումների դեմ պայքարի քաղաքականության մշակում, մոնիտորինգ և կառավարում» ծրագրին, որից՝ «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միոցառմանը կուղղվի 12.9 մլրդ. դրամ, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման՝ հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման, խափանման, հայտնաբերման և բացահայտման ծառայություններին կուղղվի 19.01 մլրդ. դրամ, պետական պահպանության ծառայություններին՝ 8.0 մլրդ. դրամ, անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայություններին և անձնագրերի ձեռքբերմանը՝ 2.3 մլրդ. դրամ, ճանապարհային

ոստիկանության ծառայություններին և տրանսպորտային միջոցների պետհամարանիշների ձեռքբերմանը՝ 11.11 մլրդ. դրամ, ոստիկանության զորքերի կողմից իրականացվող հասարակական կարգի պահպանության ու հասարակական անվտանգության ապահովմանը՝ 6.7 մլրդ. դրամ, առողջապահական ծառայություններին և դեղորայքի ձեռքբերմանը՝ 0.52 մլրդ. դրամ, կապիտալ ծախսերին՝ 4.48 մլրդ. դրամ, որից՝ Երևան քաղաքի պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոնի (ՕԿԿ) շենքերի կապիտալ վերանորոգմանը՝ 1.3 մլրդ. դրամ, Լոռու և Շիրակի պարեկային ծառայության և ՕԿԿ-ի ստեղծմանը՝ 2.8 մլրդ. դրամ:

- «Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագրին կուղղվի 1.56 մլրդ դրամ, կամ ոստիկանության ընդհանուր հատկացումների 2.34 %-ը: Կրթական ծառայությունների գծով 2022թ.-ի հատկացումները պահպանել են նախորդ տարվա ցուցանիշը:

3. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության ծառայության գործունեությունը ն պատակաուղղված է՝

- ***Ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման բարձրացմանը,***
- ***Տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքներին,***
- ***Օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացմանը,***
- ***Պետական սահմանի շուրջ օրյա հսկման և պահպանման բարելավմանը, հետախուզության, հակահետախուզության ոլորտի ընդլայնմանը,***
- ***Գաղտնի տեղեկատվության անվտանգությունն ամակարդակի բարելավմանը,***
- ***Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց և օբյեկտների անվտանգության ապահովման բարձրացմանը:***



- ***Օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտման, կանխման և խափանման մակարդակը կկազմի 100 %՝ առկա 95% մակարդակի դիմաց:***
- ***Կապահովվի ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության 100% մակարդակ:***
- ***Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հանցագործությունների բացահայտման, կանխման և խափանման մակարդակը կկազմի 100%՝ առկա 75% մակարդակի դիմաց:***
- ***Կապահովվի մշտապես պահպանվող օբյեկտների անվտանգության 100% մակարդակ:***



ԱԱԾ-ի կողմից իրականացվող ծրագրերին կուղղվի 8 մլրդ դրամով ավելի շատ միջոցներ քան 2021թ. և կկազմի 42.7 մլրդ դրամ 34.7 մլրդ դրամի փոխարեն: Մասնավորապես, ազգային անվտանգության ապահովմանը կուղղվի 38.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակից ավել է 7.6 մլրդ դրամով: Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանությանգործունեության կազմակերպմանը կհատկացվի 26.5 մլրդ դրամ

Պետական պահպանության ապահովմանը կուղղվի 4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակից ավել է 0.3 մլրդ դրամով: ՊՊԾ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և ՀՀ-ում գտնվող բարձրաստիճան հյուրերի անվտանգության ապահովում: Մշտական պահպանվող օբյեկտների թիվը 10 է:

Պետական պահպանության ապահովմանը կուղղվի 4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակից ավել է 0.3 մլրդ դրամով: ՊՊԾ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և ՀՀ-ում գտնվող բարձրաստիճան հյուրերի անվտանգության ապահովում: Մշտական պահպանվող օբյեկտների թիվը 10 է:

Գծապատկեր 37. ԱԱԾ կողմից իրականացվող ծրագրերը



4.Արդարադատություն և դատական գործունեություն

Քաղաքականությանհիմնականթիրախներնեն՝

- ***Դատաիրավական բարեփոխումների իրականացումը,***

- *Սահմանադրական բարեփոխումներ*
- *Փաստաբանության ոլորտի բարեփոխումներ*
- *Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում*
- *Կոռուպցիայի դեմ շարունակական պայքար:*
- *Վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման, ինչպես նաև քրեակատարողական համակարգի կայուն զարգացման ապահովում*
- *Արդարադատության մարմինների համար կառավարության կողմից ներդրված էլեկտրոնային համակարգերի և հարթակների շարունակական զարգացում և նոր էլեկտրոնային համակարգերի ներդրում*
- *Հարկադիր կատարման ոլորտի համընդհանուր բարեփոխումներ:*

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և դատարաններում գործի քննության ժամկետները կրճատելու միջոցով արդարադատության արդյունավետության բարձրացում:

- *Դատավարական օրենսդրության արդիականացում, կիրառման արդյունքում ծագած խնդիրների վերհանումը և դրանց լուծումներ տալը:*
- *Պարտադիր հաշտարարության գործիքակազմի, առցանց հաշտարարություն իրականացնելու, հաշտարարների՝ նոր պահանջներով վերապատրաստման, ուսուցման, որակավորման հնարավորությունների նախատեսում:*
- *Դատարանների շենքային պայմանների և տեխնիկական հագեցվածության կատարելագործում:*
- *Կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանություն, նրանց խնդիրներին ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրում:*
- *Կատարողական վարույթի օրենսդրության համապարփակ վերանայում, հարկադիր կատարման վարույթի ամբողջական թվայնացում*
- *Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի կայացման շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովումը և գործիքակազմի (ներառյալ մարդկային ռեսուրսների) կատարելագործումը, Հակակոռուպցիոն դատարանի ձևավորումը և վերջինիս բնականոն գործունեության ապահովումը, դատախազական համակարգում բարեվարքության ստուգման կառուցակարգերի իրագործումը:*
- *Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտի զարգացումը և դերի բարձրացումը.*
- *Պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը՝ ամբողջությամբ գործարկելով E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը և դրանով իսկ ապահովելով պրոբացիայի ծառայողների աշխատանքի թվայնացումը, փաստաթղթաշրջանառության կրճատումը, հաշվետու և թափանցիկ աշխատանքը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը.*
- *Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում.*
- *Քրեակատարողական հիմնարկներում գտնվող հաշմանդամություն ունեցող*

անձանց համար մատչելի պայմանների ապահովում:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գծապատկեր 38. Արդարադատության բնագավառի մարմինների ֆինանսավորման տարբերությունները 2022-2021թթ.



Գծապատկեր 39. ՀՀ Արդարադատության նախարարության կողմից իրականացվող ծրագրերը



ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարության արտաքին քաղաքականությունն ուղղված է.

Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությանը և ինքնիշխանության ամրապնդմանը

Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովմանը, ԼՂ հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորմանը

Տարածաշրջանային խաղաղության հաստատմանը, ապաշրջափակման միջոցով կայուն զարգացման ապահովմանը

Պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացմանը

Միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը

Երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացմանը՝ ուղղված տնտեսական զարգացմանը

Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը

Կառավարության արտաքին քաղաքականության սկզբունքային առաջնայնություններն են.

Արցախի ժողովրդի անվտանգության և զարգացման ապահովումը, Արցախի կարգավիճակի հստակեցումը միջազգային իրավունքի սկզբունքների՝ մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքի և «անջատում հանուն փրկության» բանաձևի հիման վրա

Արցախի ադրբեջանական վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգության պատշաճ և երաշխավորված պաշտպանությունը

Հայաստանի Հանրապետության՝ որպես ցեղասպանությունների կանխարգելման, ազգային, էթնիկ, կրոնական և ռասայական հողի վրա խտրականության և անհանդուրժողականության դրսևորումների դեմ միջազգային պայքարում առաջամարտիկի դերի ամրապնդումը

Կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցությունը

Հայաստանի մշակութային և պատմական ժառանգության հանրահռչակումը

ԲԱԺԻՆ 1. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Գործընկեր պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների խորացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված հանդիպումների, փոխայցելությունների քանակը 2022թ. 374-ից կավելանա 427-ի:

- Միջազգային հարթակում Հայաստանի դրական կերպարի ձևավորմանը, Հայաստանում ընթացող գործընթացների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանն ուղղված հրապարակումների քանակը 2022թ. 100-ից կավելանա 500-ի:

- Հավատարմագրման պետությունում Հայաստանի և Արցախի մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների թիվը 2022թ. 478-ից կավելանա 650-ի:

- Հյուպատոսական գործունեություն. ՀՀ քաքաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության իրականացման ընթացքում անձանց թիվը 2022թ. 25000-ից կաճի 27000-ի:

- Բազմակող համագործակցություն. միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի և կոնվենցիաների քանակը, որոնց անդամակցում է Հայաստանը, 2022թ. 101-ից կաճի 106-ի:

- Դիվանագիտական դպրոցն իրականացնում է Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում որակյալ մասնագետների պատրաստում և վերապատրաստում՝ նպաստելով պետական և դիվանագիտական ծառայության արդյունավետության բարձրացմանը: 2022թ. նախատեսվում է ԴԴ ծրագրերում ընդգրկել շուրջ 70 մասնակիցների:



ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների պահպանման ծախսերը 2022 թվականի համար ծրագրավորվել են 13.5 մլրդ դրամի չափով:

Ծախսերն ավելացել են դիվանագիտական ներկայացուցչությունների պահպանման ծախսերի մասով, ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափը վերանայելու, օտարերկրյա պետություններ մեկնելու և ՀՀ վերադառնալու փոխհատուցման, նախարարության հաստիքացուցակի շրջանակներում դիվանագետներին օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ գործուղելու նպատակով անհրաժեշտ գումարի ավելացման նպատակով:

Դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստման և վերապատրաստման 2021 թվականի համար ծրագրավորվել են 0.2 մլրդ դրամի չափով ծախսեր:

- ՀՀ սահմանակետերում և ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ամփոփ տվյալների հիման վրա 2021թ. ճշտված պլանի համեմատ 2022թ. տպագրական աշխատանքների ծավալները կաճեն 7000.0 հազ. դրամից 22750.0 հազ. դրամ: Վիզաները կտպագրվեն 40000 հատ, վերադարձի վկայականները՝ 30000 հատ, պաշտպանված ձևաթղթերի տպագրությունը կավելանա 16000 հատով:
- Արտաքին գործերի նախարարության աշխատանքային պայմանների բարելավման նպատակով վարչական սարքավորումների ձեռքբերում՝ 38900.0 հազ.դրամ գումարի սահմաններում:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ ծրագրով նախատեսվել են 2.2 մլրդ դրամի չափով ծախսեր:

- Հաշվի առնելով ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթությունները, միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի գործակալությունների հետ շարունակական համագործակցության կարևորությունը՝ ՀՀ պետական բյուջեով ԱԳՆ-ի՝ միջազգային կազմակերպությունների անդամակցության ծրագրով 2022թ.-ին անդամության վճարներ փոխանցվելու են թվով 106 միջազգային կառույցների՝ 2021թ.-ի 101 կառույցի փոխարեն:

Դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստման և վերապատրաստման նպատակով 2022 թվականի համար ծրագրավորվել են 0.2 մլրդ դրամի չափով ծախսեր:

- Դիվանագիտական դպրոցի գործունեությունն ուղղված է միջազգային հարաբերությունների և դիվանագիտության կրթության ոլորտում միջազգային լավագույն ծրագրերին և չափանիշներին համաձայն ՀՀ ԱԳՆ համար դիվանագետների պատրաստմանը, գործող դիվանագետների և այլ պետական ծառայողների վերապատրաստմանը: Մինչ 2021թ.-ը Դիվանագիտական դպրոցի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» դիվանագիտական կադրերի պատրաստման ծրագիրը ֆինանսավորվել է ԵՄ կողմից: 2021թ-ից այդ պարտականությունը ստանձնել է ՀՀ կառավարությունը: 2022թ.-ի համար Դիվանագիտական դպրոցի բյուջեն կազմելու է 224,5 մլն. դրամ:

Գծապատկեր 40. Արտաքին քաղաքականության պետական ծրագրեր



Գծապատկեր 41. Արտաքին քաղաքականության պետական ծրագրեր. աճը 2021թ. համեմատ, %



ՍՓՅՈՒՌՔ

Կառավարությունը սփյուռքի բնագավառում կարևորում է՝

- Հայաստան-Սփյուռք գործակցության կառուցակարգերի զարգացումը, դրանց արդյունավետ կիրարկումը, կապերի ամրապնդումը և հայության հոգևոր միասնականությունը,
- Հայապահպանությունն ու ազգային ինքնության ամրապնդումը Սփյուռքում և համահայկական խնդիրների լուծումը,
- Հայաստանի և Սփյուռքի միջև կրթական, մշակութային և երիտասարդական հաղորդակցության, ճանաչողության և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը,
- Սփյուռքի ակտիվ երիտասարդների համայնքային գործունեությունը, համայնքային նոր կառույցների ձևավորումը,
- Սփյուռքահայ բարձր որակավորում ունեցող մասնագետներին ներգրավում ՀՀ և Արցախի պետական կառավարման համակարգում,
- Հայրենադարձության խթանումը, հայրենադարձության գործընթացի կազմակերպումը և հայրենադարձների՝ ՀՀ-ում արագ և արդյունավետ ինտեգրումը,
- Ներդրումների խթանումը, մասնագիտական ցանցերի ձևավորումը և զարգացումը,
- Սփյուռքի ներուժի վերհանումն ու քարտեզագրումը և ուղղորդումը ՀՀ սոցիալ-տնտեսական, կրթամշակութային ու հասարակական զարգացմանը:

ԲԱԺԻՆ 1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հայկական շահերի պաշտպանության, համայնքային ակտիվ գործունեության, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանն և հայրենադարձությանն ուղղված միջոցառումներ ու մեդիա հրապարակումներ կիրականացվեն Սփյուռքի 20 երիտասարդ առաջնորդների կողմից:
- 1250 հայրենադարձների և հայրենադարձվել պատրաստվողների՝ ինտեգրման հարցերով բարձրացված խնդիրներին տրված լուծումներ և աջակցություն:
- Հայաստան-Սփյուռք գործակցությանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ամբողջական լուսաբանում Սփյուռքում՝ տեղեկատվական և սոցիալական բոլոր հարթակներով:
- Հայաստան - Սփյուռք գործակցության ծրագրի շրջանակներում ծրագրի մասնակից մասնագետների 25%-ի հաստատում ՀՀ-ում:
- Սփյուռքի 27 համայնքներ այցերի արդյունքում հայանպաստ միջոցառումների օրակարգերի ձևավորում և նոր կապերի հաստատում:

Սփյուռքի 400 երիտասարդների և պատանիների միջև կապի ստեղծում և հայրենաճանաչություն:

ԲԱԺԻՆ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը և ամրապնդմանը կուղղվի 374.6 մլն դրամ: Ծրագրի մասնակից սփյուռքահայերին կներկայացվի Հայաստանը, կկազմակերպվեն հայրենաճանաչության այցելություններ: Մասնակիցները կներգրավվեն Հայաստանի հանրային քաղաքականության ոլորտ և իրենց ներդրումը կունենան ՀՀ և Արցախի զարգացման նոր ծրագրերի մշակման գործում, իսկ «Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը» կօգնի նրանց հայրենադարձության հետ կապված բոլոր գործընթացներում:

1. **«Քայլ դեպի տուն»** միջոցառման շրջանակներում 400 պատանիների և երիտասարդների համար

կկազմակերպվեն ճանաչողական այցելություններ Հայաստան: Միջոցառման նպատակն է նպաստել սփյուռքի հայ պատանիների և երիտասարդների ազգային ինքնության պահպանմանը և զարգացմանը, հայրենաճանաչության և հայոց լեզվի մակարդակի բարձրացմանը: Այս միջոցառման իրականացմանը կուղղվի 83.6 մլն դրամ:

2. **«Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում»** միջոցառմանը կներգրավեն 20 երիտասարդներ: Միջոցառման նպատակն է ապահովել հայաստանյան իրականության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, համայնքային գործունեության ակտիվացմանը նպաստող նոր հմտությունների ձեռքբերում, Սփյուռքի երիտասարդ առաջնորդների ցանցի ընդլայնում: Այս նպատակին կուղղվի 11.8 մլն դրամ:

3. **«Աշխատանք սփյուռքի համայնքներում»** միջոցառման շրջանակներում կուսումնասիրվի սփյուռքի 27 համայնքների խնդիրները: Միջոցներ կձեռնարկվեն դրանց լուծման ուղղությամբ, ըստ մասնագիտական ոլորտների կկազմակերպվեն հավաք- հանդիպումներ: Այս նպատակին կուղղվի 51.0 մլն դրամ:

4. **«ի Գործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ և Արցախի պետական կառավարման համակարգում»** մրջոցառմանը ներգրավվելու են արտերկրի լավագույն բուհեր ավարտած, հանրային քաղաքականության ոլորտում մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող 25 սփյուռքահայ մասնագետներ, որոնց մասնագիտական և փորձագիտական հմտությունները կնպաստեն նորարարական գաղափարների, լայնածավալ հետազոտությունների իրականացմանը: Միջոցառման իրականացման համար կհատկացվի 123.8 մլն դրամ:

5. **«Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն»** միջոցառմանը կհատկացվի 34.2 մլն դրամ: Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնի միջոցով հայրենադարձության ողջ գործընթացի հասանելիության ու արդյունավետության բարելավումը հնարավորություն կընձեռի կարգավորել հայրենադարձության հետ կապված տարատեսակ հարցերը և կնպաստի հայրենադարձների արագ և արդյունավետ ինտեգրմանը:

ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում ծրագրին կուղղվի 204.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է իրականացնել Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունը և մարդկային ներուժի բացահայտումը, դրա վերաբերյալ տեղեկատվական համակարգերի ստեղծումը, կատարելագործումը և համալրումը, ինչպես նաև Սփյուռքի ներուժի ներգրավածությունը ՀՀ զարգացման գործընթացին: Կարևորվում է համատեղ ծրագրերի իրականացումը, համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը, Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի արդյունավետ կիրառումը:

1. **«Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում, դրա քարտեզագրում և տեղեկատվական բազայի ստեղծում»** միջոցառմանը կուղղվի 75.0 մլն դրամ: Նպատակն է Սփյուռքի մարդկային ներուժի վերաբերյալ տվյալների հավաքագրումը ու մուտքագրումը տվյալների բազա: Նախատեսվում է 20 ոլորտներում հավաքագրել 50000 անհատի տվյալ:

2. **«Համահայկական համաժողովների իրականացում»** միջոցառման նպատակն է համահայկական և համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համաժողովների և խորհրդաժողովների կազմակերպում՝ ի նպաստ Հայաստանի և Սփյուռքի համագործակցության ամրապնդմանը, համահայկական ցանցերի ստեղծմանը, ինչպես նաև հայրենադարձությանը: Նախատեսվում է իրականացնել 3 համաժողով, որի արդյունքում կստեղծվի 2 մասնագիտական ցանց: Միջոցառման իրականացման համար հատկացվել է 129.3 մլն դրամ:

1. Սփյուռքի ծրագրերն իրականացվում են ՀՀ վարչապետի աշխատակազմի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից: Սփյուռքի ծրագրերի գծով 2022 թվականին հատկացվել է 578.9 մլն դրամ՝ ՀՀ 2021 թվականին պետական բյուջեով հաստատված 890.9 մլն դրամի դիմաց: Ծախսերը նվազել են 312.0 մլն դրամով կամ 35%-ով:

Գծապատկեր 42. Սփյուռքի ոլորտի պետական ծրագրեր



Գծապատկեր 43. ՀՀ զարգացման գործընթացում Սփյուռքի ներուժի ներգրավում ծրագրի կառուցվածքն ըստ միջոցառումների



Գծապատկեր 44. Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի կառուցվածքն ըստ միջոցառումներ



Պետական ֆինանսների կառավարման ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած հանձնառություններ են.

Պետական ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործում, պետական ծրագրերի ծախսարդյունավետ կառավարում	Ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն ուղղված հարկային քաղաքականության բարելավում և հարկային վարչարարության արդիականացում	Ֆինանսական կարգապահության բարելավում: Պետական ծրագրերի արդյունքային ցուցանիշների գնահատման մեխանիզմների ներդրում:	Պետական կառավարման համակարգի օպտիմալացում	Մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշռի մեծացում	Հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրում	Պետական գնումների արդար և թափանցիկ համակարգի ներդրում	ՊՖԿ միասնական էլեկտրոնային համակարգի ներդրում	Կոռուպցիոն երևույթները ծնող պատճառների վերահսկման և վերջիններիս վերացմանը կամ չեզոքացմանն ուղղված գործողությունների իրականացում

ԲԱԺԻՆ 1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՀՀ կառավարության ֆիքսված տոկոսադրույքով պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ 80.4%-ից կնվազի և 2024թ. կկազմի 80%:
- ՀՀ կառավարության ներքին պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ 25.4%-ից կհասնի 25% (2024թ.):

- ՀՀ կառավարության ՀՀ դրամով ներգրավված պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ 24.4%-ից կհասնի 25%(2024թ.):
- Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալում 11.5%-ից կաճի և 2024թ. կկազմի 20%:
- ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 8.8-ից 2024թ. կկազմի 8-11 տարի:
- Հարկաբյուջետային ազդակը 5-ից կդառնա -1.5(2022թ.):
- Fitch-ի սուվերեն վարկունակության երկարաժամկետ միջազգային վարկանիշը BB- բացասական հեռանկարից 2025թվականին կանցնի BB- կայուն հեռանկարի:
- Moody's-ի սուվերեն վարկունակության երկարաժամկետ «Ba3՝ կայուն կանխատեսմամբ»՝ 5-ամյա հեռանկարում ձգտելով վարկանիշների բարելավումների:
- Ստանդարտ ընդ Փուր'զե-ի կողմից շնորհվող սուվերեն վարկանիշը մինչև 2023թվականը կունենա բարելավում:
- Հարկային եկամուտների կշիռը ոչ գյուղատնտեսական ՀՆԱ-ում 25.24%-ից կաճի մինչև 28.2% (2026թ.)
- Հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 22.41-ից կաճի մինչև 25% (2026թ.)
- Հարկային վարչարարության արդյունավետության գործակիցը 1.91-ից կնվազի մինչև 1.07 (2026թ.)
- Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) մեթոդաբանության հիման վրա (SAI PMF) ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան գնահատականը կաճի՝ (2) միջակայքից (3;4) (2023թ.):

ԲԱԺԻՆ 1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կաճեն պետական պարտքի կառավարման ծախսերը: **Մասնավորապես Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը, այսինքն՝ տոկոսավճարների վճարման հետ կապված ծախսերին ուղղվող միջոցները կաճեն 19.1 մլրդ դրամով և կկազմեն 213.8 մլրդ դրամ:**

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստումներին ուղղվող ծախսերը կնվազեն 8,3 մլն դրամով և կկազմեն 22,1 մլն դրամ: 2022թ. ընթացքում մասնագիտական վերապատրաստումներ կանցնեն թվով 280 ներքին աուդիտորներ, 376 գնումների համակարգողներ, ծրագրային բյուջետավորման վերապատրաստում կանցնեն 350 ծրագրային և ֆինանսականմասնագետներ:

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստումներին կուղղվի 128.8 մլն դրամ, որը

նախորդ՝ 2021թ. համեմատ նվազել է 13,6 մլն դրամով: Կիրականացվեն 41 անուն դասընթացներ, կվերապատրաստվեն 1600 հարկային և մաքսային մասնագետներ:

Պետական հատվածի արդիականացման ծրագրին ուղղվող ռեսուրսները կաճեն 217.521 մլն դրամով և կկազմեն 3.2 մլրդ դրամ: Ռեսուրսները կուղղվեն ՀՀ հանրային հատվածի ֆինանսական կառավարման բարեփոխումների մշակմանը և իրականացմանը (ՀԲ Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր):

Գծապատկեր 45. Պետական ֆինանսների կառավարման ծրագրերը 2022 թվականին՝ 2021 թվականի համեմատությամբ



	Պետական պարտքի կառավարում	Պետական հատվածի արդիականացման ծրագիր	Հարկային և մաքսային ծառայություններ	Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում	Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն
2022/2021	9.61%	-6.86%	3.37%	-27.35%	4.10%	6.27%	-6.94%

Հարկաբյուջետային քաղաքականություն (Fiscal policy) *- պետության կողմից իրականացվող հիմնական մակրոտնտեսական քաղաքականություններից մեկն է, որը հարկերի և պետական ծախսերի միջոցով ուղղված է ամբողջական առաջարկի և պահանջարկի կարգավորմանը՝ նպատակ ունենալով զբաղված ության մակարդակի փոփոխ ության, տնտեսական աճի փոփոխ ության կամ տնտեսական կայունությունը: Հարկաբյուջետային քաղաքականությունը Հայաստանում հիմնականում մշակվում է կառավարության և Ազգային ժողովի կողմից, իրականացվում է կառավարության կողմից:*

Պետական բյուջե (State Budget) *- կառավարության լիազորությունների և պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիրն է: Այն կառավարության ֆինանսական միջոցների ամբողջական հաշվետվությունն է, որը ներառում է պետական ծախսերը, հարկային և ոչ հարկային եկամ ուտները, դեֆիցիտը կամ հավելուրդը: Որպես տնտեսական քաղաքական ության և, մասնավորապես, հարկաբյուջետային քաղաքականության կարևոր փաստաթուղթ, բյուջեն ցույց է տալիս տնտեսության վրա պետ ության ազդեցության բնույթը և չափը: Այսինքն, բյուջեն ցույց է տալիս, թե հասարակական ռեսուրսներն օգտագործելով կառավարությունը ինչպես է ծրագրում իրականացնել քաղաքական նպատակները և ինչպիսի հասարակական ծառայություններ է մատուցում: Բյուջեն կազմվում և մշակվում է գործադիր իշխանության կողմից և ներկայացվում է օրենսդիր մարմին (Ազգային ժողով) ճշգրտման և հաստատման: Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն օրենքի ուժ ունեցող փաստաթուղթ է:*

Ծախսային բյուջե (Expenditure Budgeting) *- ըստ ծախսատեսակների դասակարգված ֆինանսական փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչ գումարներ կծախսվեն կամ ծախսվել են յուրաքանչ ուր ծախսային հոդվածի գծով: Ծախսային բյուջեն համարվում է բյուջեի պարզագույն տեսակ: Պատասխանում է հետևյալ հարցերին՝ ի՞նչ է գնվել, ինչքա՞ն է ծախսվել և ինչի՞ համար:*

Ծրագրային բյուջե (Program Budgeting) *- նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման արդյունքայնությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը: Այն ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն բյուջետային ծրագրերն իրականացնելիս և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրերի արդյունքների ձեռքբերման համար: Պատասխանում է հետևյալ հարցերին՝*
Ի՞նչ արդյ ունքներ ձեռք կբերվեն,
Ի՞նչ ազդեց ության ուն կլինի շահառ ուների վրա,

Մասնակցային բյուջետավորում (Participatory Budgeting) – *գործընթաց է, որի միջոցով չընտրված բնակչությունը (քաղաքացիները) անմիջականորեն քննարկում, բանակցում և որոշում են առկա հանրային ռես ուրսների կամ դրանց մի մասի ծախսման ուղղությունները կամ նպաստում են այդ որոշումների կայացմանը:*

Բյուջետային գործընթաց (Budget Process) *- հանրային հատվածի բյուջեների ձևավորման, բյուջեների կատարման (ներառյալ հաշվետվությունների կազմում, աուդիտ և*

Բյուջեի կատարում (Budget execution) *- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կանոնակարգված գործունեությունն է՝ համապատասխան բյուջեների եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսերի իրականացման ուղղությունների: Պետական բյ- ջեի կատարման համար պատասխանատու է կառավարու- թյունը:*

Բյուջետային տարի (Fiscal or Budget year) *- 12 ամիս տևողությամբ ժամանակահատված է, որի համար նախատեսվում և հաշվառվում են բյուջեի եկամուտները և ծախսերը: Հայաստանում այն համընկնում է օրացուցային տարվա հետ:*

Բյուջեի ծախսեր (Budget expenditures) *- տվյալ տարվա բյուջեով նախատեսված և օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարության և/կամ համայնքների կողմից կատարման ենթակա ծախսերն են:*

Բյ ուջեի եկամուտներ (Budget revenues) *- այն դրամական միջոցներն են, որոնք որոշակի կարգով, անհատույց և անվերադարձ կերպով հավաքագրվում և վճարվում են պետական կամ համայնքի բյուջե: Բյուջեի եկամուտները բաժանվում են հարկային եկամ ուտների, տ ուրքերի, ոչ հարկային եկամուտների, կապիտալի գործառնություններից եկամուտների և տրանսֆերտների:*

Բյուջեի դեֆիցիտ/պակասուրդ (Budget deficit) *- բյուջեի եկա ուտների նկատմամբ ծախսերի գերազանցումն է: Այն տեղի է ունենում, երբ, ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելին քան բյուջեի եկամուտներն են: Այսինքն, ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավելով լրա ցուցիչ միջոցներ ֆինանսավորվում են բյուջեի եկամուտները գերազանցող ծախսերը:*

Բյուջեի հավելուրդ (Budget surplus) *- բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումն է: Այն տեղի է ունենում, երբ ելնելով իրականացվող քաղաքակա- նությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելի քիչ քան բյուջեի եկամուտներն են:*

Դեֆիցիտի ֆինանսավորում (Deficit financing) *- պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում և մարում, վարկերի ստացում և մարում, սեփականաշնորհումից ստացված միջոցների օգտագործում և այլն: Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ըստ ներքին և արտաքին աղբյուրների: Բյուջեի դեֆիցիտը կարող է ֆինանսավորվել բանկերի, ոչ բանկային ինստիտուտների և ֆիզկական անձանց կողմից:*

Բյուջեի ծախսերի դասակարգում (Classification of budget expenditures) *- պետական և համայնքի բյուջեների ծախսերի խմբավորումն է ըստ տեսակների և ուղղությունների, որով ապահովվում է ցուցանիշների համադրելիությունը: Բյուջեի ծախսերը խմբավորվում են ըստ իրենց տնտեսագիտական բովանդակության (տնտեսագիտական դասակարգում), ըստ ուղղությունների (գործառական դասակարգում), ըստ գերատեսչությունների (գերատեսչական դասակարգում) և ըստ ծրագրերի (ծրագրային դասակարգում):*

Գործառական դասակարգ ում (Functional classification) - *արտացոլում է բյուջեի ծախսերի խմբավորումը ըստ գործունեության ոլորտների հիմնական ուղղությունների: Փաստացի դա պետական (կամ տեղական) կառավարման մարմինների հիմնական գործառույթների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է: Օրինակ՝ ընդհանուր բնույթի պետական ծառայությունների ծախսեր, պաշտպանության, առողջապահության, կրթության և գիտության ոլորտների ծախսեր և այլն:*

Տնտեսագիտական դասակարգ ում (Economic classification) - *բյուջեի ծախսերի խմբավորումն է ըստ տնտեսական բովանդակության: Ըստ տնտեսագիտական դասակարգման խմբավորվում են՝ ընթացիկ ծախսերը, որը ներառում է աշխատավարձը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տոկոսավճարները, ընթացիկ տրանսֆերտները և այլն, կապիտալ ծախսերը, զուտ վարկավորումը:*

Գերատեսչական դասակարգում (Administrative cllasification) - *ներկայացնում է պետբյուջեի ծախսերի բաշխումը օրենսդիր,գործադիր և դատական մարմինների հանրապետական ու տարածքային կառավարման մարմինների միջև:*

Ուղղակի արդյունքի չափորոշիչներ (Output Indicators) - *բյուջետային ծրագրի կատարողական չափորոշիչներ են, որոնք բնութագրում է մատուցված ծառայությունների ծավալը կամ որակը:*

Պահուստային ֆոնդ (Reserve fund) - *բյուջեում նախատեսված ծախսային հոդված է, որի հաշվին ֆինանսավորվում են տվյալ տարվա բյուջեում չնախատեսված, անկանխատեսելի ծախսերը, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը:*

Ֆինանսական համահարթեցում (Financial equalization) - *համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցում:*

Բյուջետային ծրագիրը (Budget Program) *- պետության միևնույն կոնկրետ նպատակի իրագործմանն ուղղված պետության միջամտությունների/միջոցառումների տրամաբանական ամբողջություն է:*

Վերջնական արդյունքի չափորոշիչներ (Outcome Indicators) *- բյուջետային ծրագրի կատարողական չափորոշիչներ են, որոնք հանդիսանում են բյուջետային ծրագրերի նպատակների իրագործման չափման, կատարողականի և արդյունավետության գնահատման հիմնական գործիքը, բնութագրում են հանրային պահանջարկի բավարարման աստիճանը:*

Դոտացիա (Dotation) - *պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող տրանսֆերտներ են: Դրանք ոչ նպատակային հատկացումներ են, որոնք ուղղվում են համայքի բյուջեի վարչական մասում արտացոլվող ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:*

Սուբվենցիա (Subvention) - *համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են:*

Սուբսիդիա (Subsidy) - *այն գումարներն են, որոնք պետական բյուջեից անհատույց և անվերադարձ կերպով հատկաց ում են պետական և ոչ պետական ձեռնարկություններին և կազմակերպություններին իրենց ընթացիկ գործունեության արդ ունքում առաջացած վնասները ծածկել ու կամ գործունեությունը խթանել ու համար: Սուբսիդաները սկզբունքորեն հատկացվում են տվյալ ապրանքների կամ ծառայության շուկայական գնի (կամ ինքնարժեքի) և փաստացի գնի տարբերությունը ծածկելու համար:*

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) (Gross domestic product, GDP) - *որոշակի ժամանակաշրջանում երկրի տնտեսական տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառա ությունների գումարային արժեքն է՝ արտահայտված շուկայական գներով:*

Տնտեսական աճ (Economic growth) - *բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների արտադրության ծավալների և/կամ համախառն ավելացված արժեքի (նոր եկամուտների) փոփոխությունը: Տնտեսական աճը սովորաբար չափվ ում է ՀՆԱ-ի իրական աճով կամ մեկ շնչին ընկնող իրական ՀԱԱ-ի փոփոխությամբ:*

Պետական պարտք (Public debt) - *դա պետության պարտքային պարտավորությունների հանրագումարն է: Այն գոյանում է դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ռեզիդենտներից կամ ոչ ռեզիդենտներից արժեթղթերի կամ վարկերի միջոցով փոխառությունների ներգրավման արդյունքում:*

Աղբյուրը՝ Բյուջետային և տնտեսագիտական տերմինների և հասկացությունների համառոտ հանրամատչելի բացատրագիր, ՏՋՀԿ, 2003թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՀ	Արցախի Հանրապետություն
ԱՄՆՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՁՀ	Գերձայնային հետազոտություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԿԲՆ	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՍԾՏԿ	Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն
ՄԺԾԾ	ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՇԲՕ	Շտապ բժշկական օգնության
ՈՎՀ	Ոչ վարակիչ հիվանդություններ
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՖԿ	Պետական ֆինանսների կառավարում
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՕՊԵԿ	Նավթ արտահանող երկրների կազմակերպություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրում
ՖՆ	Ֆինանսների նախարարություն